

ՑԵՂԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Օճիկ Ջարմունի

Ժողովուրդը ամբոխն է, մարդկային բազմութիւնը, որ կազմակերպուած ոյժ չէ, որ կամք չունի եւ ենթարկուիլ գիտէ: Ժողովուրդը առօրեայի հոգերով զբաղող հաւաքականութիւն է, զուրկ ցեղային յաւիտենականի զգացողութենէն, զուրկ մեծագործութեան կարողութենէն եւ հոգեբարոյական խոյանքներէ:

Ճիշդ է, որ երբեմն այս կամ այն ժողովուրդը հերոսական ու պատմական գործ մը կը կատարէ, բայց այդ շարժումն ու ղեկավարութիւնը կը պատկանին ժողովուրդին մէջէն ելած ընտիր փոքրամասնութեան մը: Այդ առաքեալներն են, որ կը թրծեն ու կը խմորեն ժողովուրդը եւ կ'առաջնորդեն պատմագործումի: Ժողովուրդ մը առանց այդ ընտրեալ սուրբերուն, քանակ է միայն, բայց երբեք որակ, մարմին է՝ բայց երբեք ոգի, նիւթ է՝ բայց երբեք ոյժ ու կամք:

Ժողովուրդը գործել կարենալու համար պէտք ունի ցեղամարդերու. այս ցեղային ոգիի ներկայացուցիչներն են, որ ժողովուրդը յաջողութիւններու եւ յաղթանակներու կ'առաջնորդեն: Այլապէս՝ ժողովուրդը ինքն իր կողմէ որեւէ քայլ չ'առնէր եւ որեւէ աշխատանք չի կատարէր: Երբ ցեղային ոգիի եւ կամքի ներկայացուցիչները պակսին, այն ատեն ժողովուրդը տարբեր չէ հօտէ մը եւ կարելի է գայն ուզուած ուղղութեամբ քշել: Այսպէս եղաւ մեր աքսորի ընթացքին, երբ հազար-հազարաւոր ժողովուրդ դէպի Տէր-Չօր գնաց ոչխարային հեզութեամբ եւ հնազանդութեամբ եւ անտրտունջ ջարդուեցաւ: Այդպէս եղաւ եւ այն ատեն, երբ ցեղին զաւակները զէնք առած լեռ կը բարձրանային ժողովուրդին ինչքը եւ պատիւը, կեանքն ու իրաւունքը պաշտպանելու համար, մինչ նոյն ժողովուրդը յաճախ կը դատապարտէր անձնուէր հերոսները, որ պատճառ կը դառնան ժողովուրդին վիճակը վատթարացնելու եւ թշնամին գրգռելու: Ստրկամիտ հասարակութիւնը այսպէս կը մտածէր, որովհետեւ զուրկ էր ցեղային ոգիէ ու բնագոյնէ, որովհետեւ ան ցեղային գիտակցութիւն ու արթնութիւն չունէր հասկնալու համար թշնամիին յետին մտքերն ու գաղտնի ծրագիրները:

Ժողովուրդները միւս կողմէն եւ յաճախ, որքան դառնութիւններ եւ յուսախաբութիւններ ճաշակել կու տան իրենց առաքեալներուն ու սուրբերուն, ի՞նչ կոշտ ու անբարեացակամ ընթացք մը կը բռնեն անոնց

հանդէպ, որոնք իրենց կեանքը, հանգիստը զոհած, ոգի ի բռին կ'աշխատին անոնց վիճակը բարելաւելու եւ բարձրացնելու զանոնք բարոյապէս ու նիւթապէս: Ժողովուրդը յաճախ չի հասկնար ու չի ճանչնար իր դատին նուիրուած գաղափարական ցեղային գործիչը եւ զայն կը հալածէ, կը մեղադրէ, կը դատապարտէ եւ կը խաչէ, անշուշտ անոր մահէն վերջ ալ, շատ անգամ, զոհին յիշատակը պանծացնելով, անոր գործունէութիւնը ջատագովելով, անոր գաղափարական մեծութիւնը փառաբանելով եւ անոր յուշարձանը կանգնելով:

Այս է ժողովուրդը եւ այսպէս ալ կը մնայ, եթէ ցեղային գիտակցութիւն եւ դաստիարակութիւն չտրուին անոր: Իսկ ցեղը ժողովուրդի մը մէջ այն տարրն է, որ կենսազգաց է, յաւիտենատենչ, մեծագործ եւ հերոսական: Առանց ցեղի ներկայութեան, առանց ցեղային ապրումի, ժողովուրդները երբեք լաւ ու փայլուն ճակատագիր եւ ապագայ չեն կրնար ունենալ: Ցեղային գիտակցութիւնը պէտք է իշխէ ժողովուրդի մը մէջ, որ ան դառնայ կեդրոնացած եւ կազմակերպուած ոյժ, դառնայ հզօր ու վճռական, ըլլայ հայրենապաշտ ու ազատասէր եւ քալէ իր մեծ նախնիներու բացած եւ նահատակներու ցոյց տուած ճամբով:

Ո՛չ մէկ բան կրնայ փրկել հայութիւնը բացի ցեղային գաղափարաբանութեան իւրացումէն: Կուսակցական թոյնով եւ իրարու հանդէպ թշնամական ատելութեամբ լեցուած անհատը կարելի է զինաթափ ընել, կարելի է քով-քովի բերել ու մէկ նպատակի եւ գործի լծել միմիայն զգացնելով, շեշտելով եւ ապացուցելով, որ նոյն ցեղին զաւակները, նոյն մօր որդիները չեն կրնար իրարու օճախ քանդել եւ ամբողջ ազգը վտանգել:

Ասոր համար է, որ կուսակցական հատուածականութեան փոխարէն, ցեղն է, որ կը քարոզենք, ցեղային գիտակցութիւնն է, որ կ'ոգեկոչենք, որովհետեւ այդ կը պահանջէ մեր ապրած դարը, բայց մանաւանդ մեր ազգային շահն ու արժանապատուութիւնը: Ցեղը ո՛չ միայն մեզ պէտք է միաձոյլ զանգուածի վերածէ, մեր ներքին տկարութիւնները ջնջէ, այլ՝ մեր ներկայ օրերու անփառունակ ճակատագիրը փոխելով՝ ճամբայ յարդարեւ դէպի մեր դարաւոր բաղձանքը հանդիսացող Ազատ Հայաստանը:

«Ռազմիկ», թիւ 35, 1942թ.

**ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Սարգիս Հարությունյան**

**Հրանտ Դինքի սպանության արձագանքը
տեղեկատվական դաշտում**

2007թ. հունվարի 19-ին Ստամբուլում հայկական «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությանը միանգամից մեծ տեղ հատկացվեց միջազգային տեղեկատվական դաշտում: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Ակոսի» գլխավոր խմբագրի սպանությունը միջազգային լրահոսի գլխավոր նորությունների շարքին դասեցին ամերիկյան, բրիտանական ու ֆրանսիական լրատվամիջոցները:

Առնվազն երեք օր՝ սպանության օրը, հաջորդ օրը եւ Հրանտ Դինքի հուղարկավորության օրը՝ հունվարի 23-ին, «Ակոսի» խմբագրի սպանության թեման *CNN*, *BBC* ու *EuroNews* հեռուստաընկերությունների լրատվական թողարկումների առաջին երեք նյութերից մեկն էր: Օրինակ, *CNN-ի* հունվարի 20-ի լրատվական որոշ թողարկումներում Դինքի սպանությանն առնչվող տեսանյութը ոչ միայն թողարկման առաջին նյութն էր՝ առաջ անցնելով իրաքյան թեմայից, այլև Հրանտ Դինքի սպանությանն էին վերաբերվում առաջին երկու նյութերը:

Սակայն միջազգային տեղեկատվական հարթությունում Հրանտ Դինքի սպանության թեման հատկապես առանձնացավ բարձր մակարդակի քաղաքական արձագանքի արդյունքում:

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիբ Էրդողանի ցավակցություններից բացի, սպանությունը դատապարտել ու Դինքի հարազատներին իրենց ցավակցություններն են հղել Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը, ներքին գործերի նախարար եւ գալիք նախագահական ընտրություններում ֆրանսիական աջերի թեկնածու Նիկոլա Սարկոզին, արտգործնախարար Ֆիլիպ Դուստ-Բլազին, Իտալիայի վարչապետ Ռոմանո Պրոդին, արտգործնախարարությունների մակարդակով՝ Միացյալ Նահանգները, Գերմանիան, Հունաստանը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի ԴեԼիսը:

Հունվարի 30-ին ԱՄՆ Կոնգրեսի Չայաստանին աջակցող խմբի անդամ Ջոզեֆ Քրոուլին Ներկայացուցիչների պալատի քննարկմանը ներկայացրեց Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւ, փետրվարի 1-ին նրա օրինակին հետեւեց ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ջոզեֆ Բայդենը՝ նմանատիպ բանաձեւ ներկայացնելով Սենատի քննարկմանը, իսկ փետրվարի 2-ին ԱՄՆ 42 կոնգրեսականներ դեպքը դատապարտող նամակ հղեցին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին:

Փետրվարի 1-ին Եվրամիության խորհրդարանը մեկ րոպե լռությամբ հարգեց «Ակոսի» գլխավոր խմբագրի հիշատակը: Ավելի վաղ՝ հունվարի 26-ին, հայտնի էր դարձել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկման է ընդունել Հրանտ Դինքի հայցը, որը վերջինս ներկայացրել էր այն բանից հետո, երբ Թուրքիայում, համաձայն այդ երկրի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի (թրքությանն անպատվելու համար)՝ իրեն դատապարտել էին վեց ամսվա ազատազրկման:

Ներքին զարգացումները Թուրքիայում

Հրանտ Դինքի սպանության առնչությամբ Թուրքիայում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ:

Աչքի զարնեց այն փաստը, որ «Ակոսի» գլխավոր խմբագրի սպանության մեջ մեղադրվող 17-ամյա Օղուն Սամասի ձերբակալության հետ կապված՝ թուրքական լրատվամիջոցներն սկսեցին տարածել տեղեկություն այն մասին, թե նա կապված է թուրք ազգայնական մի կազմակերպության հետ: Նկատի ունենալով թուրքական առանձնահատկությունները՝ այդ օրերին նման տեղեկության այդ ծավալով տարածումը դժվար թե տեղի ունենար առանց համապատասխան քաղաքական որոշման կայացման:

Հաջորդ ուշագրավ հանգամանքը հունվարի 23-ին Դինքի թաղման արարողության ժամանակ տեղի ունեցած մոտ հարյուր հազարանոց հանրահավաքն էր եւ հատկապես «Ես հայ եմ» կարգախոսը՝ հազարավոր մասնակիցների ձեռքերին: Ավելի հավանական է դիտվում այն բացատրությունը, որ նման մասշտաբի միջոցառում չէր կարող տեղի ունենալ առանց պետական աջակցության:

Հունվարի 26-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Աբդուլբադիր Աքսուն պաշտոնազրկեց Տրապիզոնի նահանգապետին եւ այդ

նահանգի ոստիկանության ղեկավարին: Փետրվարի 5-ին նրանց հետեւեց Ստամբուլի ոստիկանության հատուկ ծառայության ղեկավարի պաշտոնազրկումը: Քիչ հավանական է, որ Արդուլքադիր Աքսուն ինքնուրույն նման որոշում կայացներ: Հաշվի առնելով այս տարվա մայիսին եւ նոյեմբերին թուրքիայում կայանալիք նախագահական ու խորհրդարանական ընտրությունները՝ դժվար թե Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորած քաղաքական ուժը առանց լուրջ պատճառների որոշեր «խառնել իրավիճակը» նահանգներից մեկի վերնախավում:

Եվ վերջապես, փետրվարի 2-ին թուրքական մասնավոր TGRT հեռուստաընկերություններից մեկը եթեր հեռարձակեց մի տեսանյութ, ուր պատկերված էր ձերբակալված Օղուն Սամասը՝ թուրքիայի պետական դրոշը ձեռքին եւ իրավապահների ընկերակցությամբ լուսանկարվելիս: Փետրվարի 5-ի դրությամբ աշխատանքից արդեն ազատվել էին Սամասի հետ պատկերված հինգ ոստիկանները, եւս հինգը տեղափոխվել էին այլ աշխատանքի: Հաշվի առնելով թուրքիայում հատկապես հեռուստատեսության նկատմամբ առկա պետական վերահսկողությունը՝ ուշագրավ է, որ թուրքիայի Սամսուն քաղաքի ոստիկանության հակահարեկչական կենտրոնում նկարահանված տեսանյութը հայտնվում է եթերում:

Հետեւություններ եւ հեռանկար

Հայ-թուրքական հարաբերությունները վերափոխման շեմին են: Առնվազն այդ նպատակին են միտված հատկապես վերջին երկու տարիներին տեղի ունեցած զարգացումները:

Այդ տեսանկյունից պետք է դիտարկել դեռեւս 2005թ. փետրվարի 19-ին Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի հետ կայացած հանդիպման ժամանակ ՀՀ-ում ԱՄՆ այն ժամանակվա դեսպան Ջոն Էվանսի կողմից «ցեղասպանություն» բառի արտաբերումը: Չնայած տարբեր վարկածներին, քիչ հավանական է, որ տարիներով ԱՄՆ պետքարտուղարության համակարգում աշխատած Էվանսը արտաբերեր «ցեղասպանություն» բառը՝ առանց պաշտոնական Վաշինգտոնի թույլտվության:

Նույն տրամաբանության ներքո են ընկնում նաեւ Միացյալ Նահանգների Սենատի կողմից ՀՀ-ում ԱՄՆ նոր դեսպան Ռիչարդ Հոգլանդի թեկնածության հաստատման ձգձգումը, այս տարվա հունվարի վերջին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատ ներկայացված Հայոց ցեղասպանությունը ճանաչող 106 բանաձեւի շուրջ ծավալվող տեղեկատվական

կամպանիան ու ավելի վաղ՝ 2006թ. հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Սենատի կողմից Չայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ սահմանող օրինագծի ընդունումը: Այդ ամենը նախ եւ առաջ պետք է ընկալել որպես ճնշում Անկարայի նկատմամբ՝ վերանայելու հայ-թուրքական հարաբերությունները:

Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ ծավալված տեղեկատվական ակտիվությունը նույնպես հարկ է դիտարկել վերոնշյալ ռազմավարության տեսանկյունից: «Ակոսի» գլխավոր խմբագրի սպանության առնչությամբ Թուրքիան հայտնվեց, ըստ էության, աննախադեպ միջազգային տեղեկատվական-հոգեբանական ճնշման ներքո, որի համատեքստում արժարժվում էին Չայոց ցեղասպանության ու հայ-թուրքական հարաբերությունների վերանայման խնդիրները:

Թուրքիայի նկատմամբ ընթացող դիվանագիտական-տեղեկատվական ճնշման գործընթացում որոշակի չափաբաժին ունի նաեւ Չայաստանը: Մասնավորապես, հարկ է այդ հարթությունում դիտարկել Դինքի սպանության կապակցությամբ պաշտոնական Երեւանի ակտիվությունը եւ ՀՀ պաշտպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 22-ին ամերիկյան «*The Wall Street Journal*»-ում եւ 2007թ. փետրվարի 1-ին Բրյուսելում լույս տեսնող «*European Voice*»-ում հրապարակած հոդվածները:

Մյուս կողմից՝ կարծես թե ավելի հիմնավոր է դառնում այն տեսակետը, թե Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարության համար ամենեւին էլ անսպասելի չէին Հրանտ Դինքի սպանությանը հաջորդած զարգացումները: Այստեղ հարկավոր է առանձնացնել երկու ասպեկտ.

❖ չպետք է բացառել, որ Թուրքիայում «Ակոս» թերթի գլխավոր խմբագրի սպանությանը հետեւած հակաազգայնական տեղեկատվական կամպանիան կարող է միտված լինել թուրքական հասարակության հոգեբանական-տեղեկատվական մշակմանը՝ նպատակ ունենալով բարելավել հայերի ու Չայաստանի իմիջը Թուրքիայում, օրինակ՝ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանն ընդառաջ (ինչպես հայտնի է, թուրք ազգայնականությունը նման հեռանկարի սկզբունքային հակառակորդն է),

❖ Հրանտ Դինքի սպանության հետ կապված զարգացումները Էրդողանի գլխավորած քաղաքական ուժը, թերեւս, օգտագործում է առաջիկա նախագահական ու խորհրդարանական ընտրություններում իր հիմնական հակառակորդի՝ թուրք քաղաքական վերնախավի աշխարհիկ հատվածի դեմ, որն ունի բանակի աջակցությունը եւ որի գաղափարախո-

սական հենքուն լրջորեն ներկայացված է թուրքական ազգայնականությունը: Այս առումով, հատկանշական էր հունվարի 29-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությունը, թե ինքը չի բացառում, որ Հրանտ Դինքի սպանությունը կարող է կապված լինել մայիսին Թուրքիայում սպասվող նախագահական ընտրությունների հետ:

Վերոհիշյալի համատեքստում ակնհայտ է, որ «Ակոս» թերթի գլխավոր խմբագրի սպանությունը ոչ միան առնչվում է հայ-թուրքական հարաբերություններին, այլև տեղավորվում է տարածաշրջանային զարգացումների հարթությունում: Ըստ այդմ, Միացյալ Նահանգների ու եվրոպական մի շարք երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ կիրառվող ճնշումը գլխավորապես ունի ռազմավարական մեկ նպատակ՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման միջոցով հասնել Հարավային Կովկասում արեւմտյան ազդեցության ընդլայնմանը:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ» ՀԱՄԱՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ

Թուրքական «Ակսիոն» հանդեսը սույն թվականի հունվարի 29-ին տպագրել է հարցազրույց Թուրքիայի Ինոնյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Սալիմ Ջյոհջեի** հետ, որը հայտնի է Թուրքիայի հայերի մասին կատարած իր ուսումնասիրություններով: Հարցազրույցում Ջյոհջեն անդրադառնում է Հրանտ Դինքի սպանությանը եւ ներկայիս Թուրքիայում ապրող «ծպտյալ հայերի» խնդիրներին: Ստորեւ թարգմանաբար եւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հարցազրույցը:

– Հնարավո՞ր է, որ մարդիկ, որոնք Թուրքիայում հայտնի են որպես «ծպտյալ հայեր», Դինքի հուղարկավորության արարողությունը օգտագործած լինեն որոշ նպատակների համար:

– Ես կարծում եմ, որ հանրահավաքում ներկաներից շատերը «ծպտյալ հայեր» էին¹: Մյուս կողմից, իհարկե, այդ բռնարարքը դատապարտող անկեղծ մարդիկ էլ կային: Այս սպանությունը արդարացման եզրեր չունի, քանի որ տեղի է ունեցել ոչ մարդկային արարք: Իմ կարծիքով, իրենց մինչ այս պահը թաքցրած եւ Ահմեթ, Մեհմեթ անուններով հայերը հուղարկավորության ժամանակ գիտակցաբար բացահայտվեցին: «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ ենք» արտահայտությունը դրա վկայությունն էր: Ըստ իս, Հրանտ Դինքի սպանությունը «ծպտյալ հայերի» հիմնովին բացահայտվելու համար մի հայտնությունն եղավ:

– Այս գործընթացը ավելի վաղ չէ՞ր սկսվել:

– Ավելի վաղ էր սկսվել: Դատարաններին մի շարք հայցեր են հղել: Մալաթիայում 122 քաղաքացիներ նահանգապետարանին դիմելով՝

¹ Իր մեկ այլ հարցազրույցում պրոֆեսոր Ջյոհջեն նշում է, որ «կրիպտո քրիստոնյաները» կամ «զաղտնի հայերը» նրանք են, ովքեր արտաքուստ իրենց ցույց տալով իբրև մուսուլմաններ՝ իրականում թաքուն շարունակում են քրիստոնյա-լուսավորչական ավանդույթները: (Ծանոթագրությունները և մեկնաբանությունները՝ թարգմանչի):

պահանջել էին վերաբացել եկեղեցին: Թուրքիայում բացահայտ հայեր կան, եւ նրանք իրենց ուզածի պես ապրում են. նրանց նպատակները եւ ցանկությունները հայտնի են: Սակայն այս ծպտյալների ծրագրերը հայտնի չեն եւ միշտ վատ նպատակներ են հետապնդում: Այստեղ ուշադրության արժանի զարգացումները անցյալում իսլամը նախընտրած հայերի վերաբերյալ տարվող աշխատանքներն են, որոնք միգրացե առաջիկայում կարող են լուրջ արդյունք տալ: Ինչքան որ ես կարողացել եմ արձանագրել, ոչ միայն Մալաթիայում, այլեւ Էյլազիզում, Ադրյամանում, Գազիանթեփում, Դիարբեքիրում եւ Էրզրումում այս ուղղությամբ տենդագին ջանքեր են գործադրվում: Բացի այդ, նախկինում այս նահանգներում գրանցված եւ որոշ ժամանակ այլ քաղաքներ՝ հիմնականում Ստամբուլ գաղթած անձինք կրկին ձգտում են վերագրանցվել իրենց նախկին նահանգներում կամ էլ գավառներում: Սրանք չեն կարող լինել հենց այնպես, պատահական ի հայտ եկած ձգտումներ:

– Իսկ ի՞նչ են ցանկանում անել:

– Ակնհայտ է այստեղ հայկական գործող գաղութ վերածեւավորելու եւ մնացյալ բոլոր հայերի՝ հիմնականում սփյուռքահայերի, այս տարածքների հանդեպ ունեցած հետաքրքրությունը վառ պահելու ցանկությունը: Սրանք եթե դեմոկրատական միջավայրում նորմալ համարվեն էլ, չի կարելի ասել, թե այս գործընթացը լավ նպատակի է միտված:

– Ուրիշ զարգացումներ էլ կա՞ն, որոնք արձանագրել եք, թե՞ այսօրվա են սահմանափակվում:

– Ասում են, որ վերջին ժամանակներս որոշ անձինք տարբեր պատրվակներով հետաքրքրվում են անցյալում հայ կոմիտեականների դեմ պայքարած, հատկապես Մալաթիայի եւ Մարաշի շրջակայքում ապրող ընտանիքներով, աշխատում ճշտել սրանց սերունդներին: Եթե սա ճիշտ է, ուրեմն՝ դժվար չէ ենթադրել, որ նմանատիպ ուսումնասիրություններ են իրականացվում նաեւ Էրզինջանի (Երզնկա), Էրզրումի, Կարսի, Վանի, Դիարբեքիրի, Մարդինի եւ Էյլազիզի շրջաններում:

– Իսկ ինչի՞ համար է նման ուսումնասիրություն կատարվում:

– Ամենայն հավանականությամբ ոչ այն բանի համար, որ ասեն «կեցցես» կամ էլ «մեղալ տան»: Ձեզ կարող է «ցնորք» թվալ, սակայն ես կարծում եմ, որ այս ամենը հաշվարկված է ու հետապնդում է վրեժ լուծելու եւ ի վերջո հայկական մի պետություն ստեղծելու ցանկություն²:

– Դուք խոսում եք «ծպտյալ հայերի» եւ ապագային միտված նրանց գործունեության մասին: Թուրքիայում այս պայմաններում, ծպտված ապրող ինչքա՞ն հայ կա:

– Հատկապես աքսորի եւ տեղահանման ժամանակ հայ հպատակների մի մասը մուսուլմանություն է ընդունել: Սրանց որոշ մասը ավելի ուշ նախկին կրոնին է վերադարձել: Սակայն այսօր նրանց բոլորին, թեկուզ նույն ծագումն էլ ունենան, հայ համարելը կամ էլ որպես «ծպտյալ հայ» ընդունելը ճիշտ չէ: Քանի որ նրանց շրջանում կան մարդիկ, ովքեր հայկականության հետ արդեն ոչ մի կապ չունեն, դարձել են իսլամ մեծամասնության մի հատված, եւ նույնիսկ նրանց մեջ հանդիպում են նաեւ բավական կրոնասեր մարդիկ: Սակայն փաստ է նաեւ, որ վերջին ժամանակներս նրանց վերաբերյալ շարունակական աշխատանքներ են տարվում: Հայտնի է, որ որոշ ընտանիքների անհատույց օգնում են, նրանց երեխաներին ուղարկում արտասահման, հիմնականում ԱՄՆ եւ Կանադա, գործի տեր դարձնում: Այս վիճակը բնորոշ է գրեթե ամբողջ արեւելյան եւ հարավարեւելյան Անատոլիայի քաղաքների համար, սակայն ավելի տարածված է Դիարբեքրի, Ադրյամանի եւ Մարդինի նահանգներում:

² Թուրքական «Աքթուել» հանդեսում Ջոհիջեն առաջ է քաշում նաև այն միտքը, որ ապագայում այս «ծպտյալ հայերը» կօգտագործվեն հայերի երազանքներն իրականացնելու համար: Իսկ այն հարցին ի պատասխան, թե իր կարծիքով «գաղտնի հայերը» արդյոք կարող են սպառնալիք ստեղծել, նա պատասխանում է. «Ցավոք սրտի՜ այո: Հատկապես վերջին տարիներին հայկական խմբերի կողմից աշխատանքներ են տարվում՝ աշխատում են հիշեցնել նրանց ինքնությունը, գունարով օգնում: Ես կարծում եմ, որ ինչպես ԱՍԱԼԱ-ից հետո ծագեց ՔԲԿ-ի (Քրդական բանվորական կուսակցություն) խնդիրը, այնպես էլ ՔԲԿ-ից հետո այս մարդիկ Թուրքիայում կօգտագործվեն «քաղաքային տեռորի» նպատակով (նկատի ունի միատարր բնակչությամբ քաղաքների հիմնումը – Ռ.Մ.): Այսպիսի զարգացում հնարավոր է մինչև 2010 թվականը ի հայտ գա: Ես հավատում եմ, որ այս մարդկանց՝ իրենց հայկական ինքնությունը գիտակցաբար հիշեցնելու արդյունքում վաղը նրանք Թուրքիայի առաջ հողային և փոխհատուցման պահանջներով են հանդես գալու»:

– «Ծպտյալ հայերի» քանակի մասին հնարավոր է գնահատական տալ:

– Բնակչության թվաքանակի մոտավոր գնահատականը չի կարող հստակ ներկայացնել իրական պատկերը: Սակայն նմանատիպ մարդկանց թիվը, կարծում եմ, ամբողջ Թուրքիայի մասշտաբով մոտ 80-100 հազար է: Օրինակ՝ հայտնի է, որ Մալաթիայում կան ծպտյալների մոտ 3500 ընտանիքներ, այսինքն՝ 10-12 հազար հայ բնակչություն:

– «Դուք ծագումով հայ եք» ասելով՝ 100 հազար մարդկանց իրենց արմատներին վերադարձնելը ինչի՞ կհանգեցնի:

– Ունանք ցանկություն ունեն ստեղծել կղզյակներ, սակայն նրանք դեռ չունեն այնքան բնակչություն, որ կարողանան այս նպատակն իրագործել ավելի ընդարձակ տարածքում, եւ ներկայումս դա հնարավոր է անել միայն փոքր տարածքներում, այսինքն՝ մի քանի քաղաքում եւ նրանց ենթակա գյուղաքաղաքներում: 1980-ականներին քննարկվում էր Վանի շրջանում 250 հազարանոց բնակչությամբ մի քաղաք հիմնադրել, որտեղ պետք է ապրեին թոշակառուներ (ըստ ամենայնի՝ «Ծպտյալ հայեր» – Ռ.Մ.): Եթե նման միտք առկա է, ապա դա մեկ բացատրություն ունի, այն է՝ «Մեծ Հայաստանի» համար ամուր հիմքեր ստեղծել: Կարող եմ թվարկել այն հայտնի պետությունների անունները, որոնք, ինչպես եւ անցյալում, այս հարցում եւս կարող են շահագործել հայերին. դրանք են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Ռուսաստանը: Չնայած պարզվում է, որ վերջին երեսուն-քառասուն տարում Շվեդիայի, Նորվեգիայի նման պետություններն էլ են հետաքրքրվում Թուրքիայի արեւելքով, սակայն անհրաժեշտ չէ սրանց շատ մեծ ուշադրություն դարձնել: Կա նաեւ եկեղեցու գործուն: Հայերին շահագործելով՝ եկեղեցիներն իրենց համար հետեւորդներ են հավաքում, իսկ իրենց պետությունների համար էլ՝ համախոհներ: Հայերի ստեղծած հիմնադրամներն էլ չպետք է անտեսել: Օրինակ՝ հայտնի է, որ ԱՍԱԼԱ-ին երկար ժամանակ ֆինանսավորել եւ ուղղորդել է Գյուլբենկյան հիմնադրամը, որի կենտրոնը գտնվում է Լիսաբոնում:

– Հայերի հավակնած տարածքների նկատմամբ էթնիկ-ազգայնական քրդերն էլ պահանջներ ունեն: Ուրիշ խմբեր էլ այս հողերի վրա աչք ունեն: Այս պարագայում պետությունը ի՞նչ պետք է անի:

– Պետք է շատ մեծ բժախնդրությամբ հետեւել ժողովրդագրական կառուցվածքի փոփոխություններին եւ հնարավորություն չտալ

այնպիսի զարգացումների, որոնք առաջիկայում կարող են բացասական հետեւանքների հնարավոր հիմք հանդիսանալ: Ժողովրդավարության սահմանների մեջ մնալով՝ հանգիստ կարելի է սրան ուղղված միջոցներ ձեռնարկել: Իսկ շատ ավելի կարելոր խնդիր է լավ տիրապետել շրջանի ազգային-կրոնական վիճակին եւ շարունակաբար հետեւել այս ասպարեզում կատարվող փոփոխություններին: Ցավոք, դեռ չունենք կառույցներ, որոնք կկարողանան կատարել այս աշխատանքները: Մի պահ առաջ պետք է ստեղծվեն տեղեկատվության աղբյուրներ եւ լրջորեն աշխատանքներ ծավալվեն:

*Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը*

3.4. Հարկ ենք համարում նշել, որ Թուրքիայի «Ժպոյալ» եւ մուսուլման հայերի ու նրանց սերունդների հարցերով ակտիվորեն զբաղվել է նաեւ Հրանտ Դինքը: Ըստ Դինքի, իր խմբագրած «Ակոս» շաբաթաթերթը նպաստել է, որ «կորած հայերը» գտնեն իրար: Ինչպես նշել է Դինքը՝ «Պատահում է օրական 5-6 նամակ ենք ստանում: Մարդիկ գտնում են միմյանց: Հայերը ամեն տեղից սկսում են զգացնել տալ իրենց գոյության մասին, եւ շատ ուրախ ենք, որ «Ակոս»-ը այս հարցում կարելոր մի միջոց է»: Դինքը, երեւի թե իր ամենավերջին հարցազրույցներից մեկում, տպագրված ԱՄՆ-ի հայկական «Օրակարգ» թերթի 2007 թվականի հունվարի 10-ի համարում, նշում է. «Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւնը ունին հրապարակաւ արտայայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ եւ ամենայուսալի աշխատանքներէն մեկը կրնայ դառնալ անիկա, քանի որ Թուրքիան որքան ժողովրդավարականանայ, մարդիկ իրենց ինքնութիւնը արտայայտելու այնքան աւելի քաջութիւն պիտի ունենան: Սա նախադասութիւնով կրնամ իմ հայեացքս դրսեւորել եւ ըսել, որ՝ եթէ Թուրքիան եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեն սխալիր, եթէ հայութիւնը առնուազն երկու միլիոն եւս շատնայ, Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով: Ինծի համար շատ կարելոր է այս հարցով աշխատիլ եւ գտնել այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները, որ քրիստոնէական պատգամ է: Շատ կարելոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը...»:

Ռ.Ս.

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՏԱԿՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Խաչատուր Դադայան**

Կտակը անձի վերջին կամքի գրավոր դրսեւորումն է, ընդ որում՝ ստորել խոսքը ոչ թե զուտ նեղամտական, միջազգակցական, հետժառանգային, այլ այնպիսի կտակների մասին է, որոնք ունեն ազգային-հասարակական բնույթ: Բնականաբար, հարկ է հաշվի առնել, որ կտակարարի ունեւորության աստիճանը, կապիտալի չափը ուղիղ համեմատական են կտակի արժեւորությանը:

Վերջին կամքի իրացումը գրեթե մշտապես եւ ամենուրեք հարգվել է, քանզի ունի ոչ միայն բարոյական, այլեւ իրավական հենք: Սակայն աշխարհասփյուռ հայոց տարաբնույթ կտակների, հարակից բազմաթիվ փաստաթղթերի ուսումնասիրությունը հանգեցնում է մի շարք եզրակացությունների, որոնք լուրջ խորհրդածությունների տեղիք են տալիս:

Կտակները կարելի է խմբավորել մի քանի դասերի:

Պարզ կտակներ: Այսինքն՝ կտակարարն ավանդել է որոշակի գումար (կամ ունեցվածք, շարժական եւ անշարժ գույք), որն իրացվել է կամարտահայտողի մատնանշած կոնկրետ նպատակների համաձայն: Այլ կերպ ասած՝ այդպիսիք ունեն պարզ նվիրատվական բնույթ: Օրինակ, 1672թ. Պողոպեի Յազլովեց քաղաքում (այժմ՝ Ուկրաինայի Յաբլոնովկա) վախճանված նշանավոր վաճառական ու կալվածատեր Մինաս Շիրինովիչը Աբ. Էջմիածնին ու Երուսաղեմի Աբ. Հակոբա վանքին է կտակել 50-ական տալեր, Յազլովեցի հայոց Աբ. Աստվածածին եկեղեցուն՝ 200 տալեր, քաղաքի բարենորոգությանը՝ 300 տալեր: Կամ, 1751թ. Մադրասում վախճանված խոշոր վաճառական Պետրոս Ոսկանյանը 1000 թուման է կտակել Նոր Ջուղայում դպրոց բացելու, 400 թուման՝ նույն քաղաքում աղքատանոց կառուցելու համար: Եվ կամ 1827թ. Բաթավիայում (Ջակարտա) վախճանված վաճառական Գեորգ Մանուչարյանը 25 հազ. գուլդեն կտակել է Աբ. Էջմիածնին, 30 հազ.՝ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանին, 25 հազ.՝ Երուսաղեմի Աբ. Հակոբա վանքին:

Եկեղեցանպաստ կտակներ: Այս խումբը բավականին ծավալուն է: Այսպես, XVդ. վաճառական Հովհաննեսը Սուլթանի (Ռումինիա) իր տունը կտակել է Մուղդովիցա վանքին, Հովհաննես Արմենսին՝ նույն

վանքին իրեն պատկանող Օստանկանա գյուղի կեսը, իսկ 1707թ. լվովցի հայ Դոմինիկ Բոգդանովիչը 300 լեհական ֆլորին՝ Սուչավայի Սբ. Չաճկատար վանքին: Գյուլնազարի որդի խոջա Նահապետը (XVIIդ.) 200 դուկատ է կտակել Վենետիկի Սբ. Խաչ եկեղեցուն: 1709թ. Չինիփաթամուն (Յնդկաստան) վախճանված Սարգսի որդի խոջա Գրիգորը զգալի գումարներ է կտակել Սբ. Էջմիածնին եւ Նոր Ջուղայի 17 եկեղեցիներին: Խաչատուր Լազարյանի կտակով 1779թ. Մոսկվայում կառուցվեց Սբ. Խաչվերաց եկեղեցին: Կահիրեում բնակվող Պետրոսի որդի Եղիազար ամիրան 1821թ. կազմած կտակով 36.500 դուրուշ է հատկացրել Եգիպտոսի, Երուսաղեմի, Կ.Պոլսի, Ալնա գավառի 11 եկեղեցիների: Ամիրա Միսաք Միսաքյանի կտակով 1857թ. կառուցվել է Կ.Պոլսի Սբ. Կարապետ եկեղեցին: 1990թ. Սեթ եւ Շողեր Եսայանները Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքին են կտակել իրենց հայրենական տունը:

Այս խմբի կտակների ողբերգությունը կայանում է նրանում, որ հայոց տեղաշարժերի, հետեւաբար եւ՝ համայնքների նվազման կամ իսպառ վերացման հետ մեկտեղ ի չիք են դարձել ոչ միայն եկեղեցիները, այլեւ՝ կտակները:

Կրթանպաստ կտակներ: Այս խումբը ժամանակային եւ աշխարհագրական ընդգրկմամբ ամենախոշորն է, եւ իմաստ չկա անգամ մասնակի թվարկում կատարել: Հայ դրամատերերը կրթությունը համարել են ոչ միայն ազգային ինքնապահպանության, այլեւ արտաքին մրցակցությանը դիմակայելու լավագույն միջոց: Սակայն կտակների պատմության մեջ կրթանպաստները, թերեւս, ամենաանփառունակներն են. դրանցով եւ այդպիսիների աջակցությամբ ստեղծված ուսումնական հաստատություններն են առաջինը կրել ցեղասպանողների, քաղաքական եւ ազգամիջյան հալածանքների ու բռնությունների հարվածները: Անէացման բախտի արժանացան այնպիսի փայլուն կրթօջախներ, ինչպիսիք էին Կարինի Սանասարյան, Մոսկվայի Լազարյան, Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանները, Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանը, Նոր Նախիջեւանի Գոգոյան օրիորդաց գիմնազիան, Աստրախանի Աղաբաբյան ուսումնարանը, 1834թ. Պադուայում հիմնված Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը, Կալկաթայի Դավթյան օրիորդաց դպրոցը եւ այլն, եւ այլն:

Հիմնադրամային կտակներ: Սրանք ամենաերկարակյացներն են, քանզի ամրագրված նախապայմանի համաձայն՝ ավանդված գումարը հանդիսացել է անձեռնմխելի դրամազուլուխ, որի շահութատոկոսներն են միայն իրացվել: Այս կարգի կտակները կարելի է տարանջատել երկու ենթախմբի. 1) *ինքնուրույններ եւ* 2) *խոշոր հիմնադրամների հանձնվածներ:* Երկուսին միավորում է մեկ բաղադրյալ՝ կտակակատարի ինստիտուտը:

Բանն այն է, որ դրամագլուխը գործի մեջ դնելը եւ շահութատուկոս ստանալը հեշտ չէ. այստեղ է, որ շատ բան կախված է կտակակատարի ձեռներեցությունից ու փորձառությունից: Ինքնուրույններն ունեն սահմանափակ գործառույթներ եւ մասնակից են որոշակի ծրագրերի իրականացման (ասենք, Հարություն ու Սեթ Աբգարյանների, Հովսեփ Պողոսյանյանի հիմնադրամները Նոր Ջուղայում, Իզմիրյան, Ջինիշյան, Փիլիպոսյան, Ավետիս Ղուկասյան եւ տասնյակ այլ նույնատիպ հաստատություններ): Խոշոր հիմնադրամները ներառում են բազմաթիվ կտակներ, գործադրության շատ ավելի լայն հնարավորություններ ունեն եւ իրականացնում են համազգային նշանակության ծրագրեր: Մեր ժողովրդի պատմության մեջ կան երեք համեմատաբար հարատեւ այդպիսի հիմնադրամներ՝ Բաքվի «Աբ. Գրիգոր Լուսավորչի անվան հայոց մարդասիրական ընկերությունը» (1864-1921թթ.), Թիֆլիսի «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը» (1888-1921թթ.) եւ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Եվ եթե առաջին երկուսը զոհ գնացին քաղաքական, ազգամիջյան վայրիվերումների, ապա երրորդն ավելի քան 100 տարի իրականացնում է իր ազգապահպանական առաքելությունը:

Ազգային (կամ համազգային) կտակներ: Կտակների այս համախումբն ունի խիստ արդիական նշանակություն: Դրանց միավորիչ առանձնահատկությունն այն է, որ մարդը վերջին կամքով իր ամբողջ ունեցվածքը (գումար, շարժական եւ անշարժ գույք) կտակել է *ազգին*, իրավատեր է ճանաչել ազգին: Այսպես, 1864թ. Կահիրեում վախճանված մեծահարուստ Կարապետ Գալուստյանը 430.900 ֆրանկ արժողությամբ ունեցվածքը նվիրաբերել է ազգին: Նույն կերպ են վարվել Գրիգոր Մեղվինյանը (Թիֆլիս, 1897թ., 59.300ռ.), Միրզա Աղամալյանը (Մոսկվա, 1897թ., 7000ռ.), Կարապետ Խուպեսերյանը (Կ.Պոլիս, 1901թ., 3000 օսմանյան ոսկի), Հովհաննես Գյումշյանը (Մարսել, 1902թ. 10.000 օսմանյան ոսկի), Բաքվի նավթարդյունաբերության ականավոր գործիչ Արշակ Ղուկասյանը (Բաքու, 1914թ., 8 մլն ռ.), Չիլինգարյանը (Բաթում, 1920թ., 2 մլն ռ.) եւ այլն:

Ո՞վ է այս կտակների իրավատերը, ո՞վ է ազգի ժառանգորդը, եթե ոչ *ազգի պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը*: Երբ խոսում ենք պահանջատիրության մասին, հարկ է գիտակցել, որ այն շատ ավելի լայն ըմբռնում է, քան հասկացվում է այսօր: Ընդ որում՝ ազգային կտակների խնդիրը գտնվում է միջազգային իրավունքի նորմերի հարթությունում եւ մեծ առնչություն չունի քաղաքական կամ այլեւայլ հիմնահարցերի հետ:

Կարող է հարց ծագել՝ ինչպիսի՞ իրավական հեռանկար ունի նման գործընթաց հետապնդելը: Համենայն դեպս, հայտնի է մեկ դրական նախադեպ: 1794թ. մայիսի 30-ի կտակով Կալկաթայում բնակվող Բաբաջանի որդի Մասեհը 80.000 ռուբլի կտակեց Նոր Նախիջեւանի հայ համայնքին (Մասեհ Բաբաջանի կտակի գրման քվականին Հնդկաստանում անգլիական բանակի զինվորի ամսական ռոճիկը 7 ռուբլի էր): 1866թ. բանաստեղծ Միքայել Նալբանդյանը մեկնեց Հնդկաստան եւ կարողացավ որոշակի շահութատոկոս ստանալ: 1948թ. կտակի տոկոսն արդեն կազմում էր 320.000 ռուբլի: 1952թ., խորհրդային իշխանության օրոք, Սբ. Էջմիածնին հաջողվեց այդ գումարից ստանալ 4000 անգլիական ֆունտ ստերլինգ, իսկ 1956-ին տոկոսաչափը կազմում էր շուրջ 20.000 ֆունտ ստերլինգ: Որքա՞ն է այն այժմ կազմում...

Ազգային կտակների խնդիրը պետաիրավական կամ այլ միջոցներով հետապնդելն ունի ոչ միայն ֆինանսական բաղադրիչ: Այդ կտակներով զբաղվելը նշանակում է ձգտել վերադարձնելու պատմական հիշողությունը, ազգային վեհանձնությունն ու արժանապատվությունը: Թեկուզեւ այն բանի համար, որ կտակներ արվեն հօգուտ հայոց պետության:

**ԻՐԱՔԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԸ`
ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ
Արաքս Փաշայան**

Պատմական տվյալները վկայում են, որ Արաքսական խալիֆայության շրջանում (VIII-XIIդդ.) Բաղդադում եղել է հայ համայնք, որտեղ 1222թ. հիմնվել է հոգևոր թեմ: Հայ գաղութը սկսել է ստվարանալ XVIII դարի սկզբին, երբ Իրաք են եկել շահ Աբասի բռնագաղթով տեղահանված եւ թուրքիայից (ջալալիներից) հալածված բազմաթիվ հայեր: Հետագայում իրաքահայ համայնքը համալրվել է Հայոց ցեղասպանությունից փրկված տարագիրներով: 1920-ականներին Իրաքում ապաստան էր գտել շուրջ 90 հազար հայ: Ավելի ուշ նրանց մի մասը հեռացավ երկրից, մի մասը հայրենադարձվեց Հայաստան:

1980-1990-ականներին իրաքահայերի թիվը կազմել է 22.000-25.000, որից 15-17.000-ը բնակվել է Բաղդադում, մնացյալը` հիմնականում Բասրա, Մոսուլ, Քիրքուք եւ հյուսիսային սահմանամերձ Ջախոքաղաքներում: Նշված բոլոր հայաբնակ շրջաններում մինչեւ ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացումը (2003թ.) կային հայկական դպրոցներ: Համայնքում գործում էին կրթական, մարզական, մշակութային եւ բարեգործական հաստատություններ: Հայկական պարբերականներ գրեթե չեն հրատարակվել: Իրաքահայերը հիմնականում զբաղվում էին առեւտրով եւ արհեստներով, նրանց մեջ կան նաեւ բժիշկներ, ինժեներներ, պետական ծառայողներ:

Իրաքահայերը ներկայացված են լուսավորչական եւ կաթոլիկ համայնքներով: Իրաքի Հայոց թեմն էջմիածնական է եւ ունի 9 եկեղեցի: Ամենամեծ եկեղեցին Բաղդադի Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է: Բաղդադում կան հայկական հինգ եկեղեցիներ: Իրաքի քրիստոնյաները երկրի ընդհանուր բնակչության մոտ երեք տոկոսն են: Նրանց մեջ ամենամեծ խումբը քաղղեացիներն են, հետո` հայերն ու ասորիները: Հայերը համարվում են թվով հինգերորդ էթնոզավանական խումբը` արաբներից, քրդերից, քաղղեացիներից եւ թուրքմեններից հետո:

Սադան Հուսեյնի իշխանության շրջանում (1979-2003) հայերը հիմնականում ապրել են ապահով եւ բարեկեցիկ կյանքով: Նրանք մեծ համարում են ունեցել նախեւառաջ որպես հմուտ արհեստավորներ: Իրաքահայերը քաղաքական կյանքում որեւէ դերակատարում չեն

ունեցել, ինչը բնորոշ է Միջին Արևելքի հայկական գաղթօջախներին: Երկիրը միանձնյա ղեկավարում էր Արաբական վերածննդի սոցիալիստական «Բասս» կուսակցությունը՝ ի դեմս սուննի փոքրամասնության: Երկրում հակակառավարական ամեն մի փորձ, կրոնադավանական ուղղվածությամբ ցանկացած ելույթ դատապարտված էր ձախողման եւ անողոք հաշվեհարդարի: Վարչակարգից դժգոհ առանձին իրաքահայեր տարբեր ժամանակներում արտագաղթել են Չայաստան կամ այլ երկրներ: (Սադամի իշխանության շրջանում շուրջ 16 տարի (1986-2002) բանտում է անցկացրել իրաքահայ Պերճ Կիրակոսյանը, որին անհիմն կերպով մեղադրել էին ԳՖՅ-ի համար լրտեսություն անելու մեջ):

Իրաքահայերը զգալիորեն տուժեցին իրանա-իրաքյան ութնամյա (1980-1988) պատերազմից: Մի քանի տասնյակ հայեր մահացան, իսկ շատերն էլ գերի ընկան: Իրաքահայերի շրջանում զոհեր եւ կորուստներ եղան նաեւ Ծոցի երկրորդ պատերազմի ժամանակ, երբ 1990թ. օգոստոսին Իրաքը ներխուժեց Քուվեյթ: Ինչպես պատմում է իրաքահայ Կարապետ Չակոբ Կետիկյանը, որն այդ տարիներին Իրաքի ամենահարուստ գործարարներից էր, 1992-ին իրեն ստիպում են, որպեսզի արտասահմանյան բանկերում ունեցած հաշիվները տրամադրի իրաքյան կառավարությանը: Մերժումից հետո Կետիկյանին կտտանքների են ենթարկում, իսկ ունեցվածքը՝ բռնագրավում:

2003-ին ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացումից ի վեր սկիզբ առած պարտիզանական կռիվներն ու քաղաքացիական պատերազմը ստեղծել են քառասյին իրավիճակ, որից տուժում են ոչ միայն սուննի եւ շիա մահմեդականները, այլև քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը:

Քրիստոնյաների համար վտանգավոր հակառակորդ են ծայրահեղ արմատական իսլամական խմբավորումները, որոնք Իրաքի քրիստոնյաներին համարում են կոալիցիոն ուժերի «դաշնակից»: Իրաքահայերը խուճապի մեջ էին հայտնվել, երբ հայտնի դարձավ, որ Չայաստանը խաղաղապահ ուժեր է ուղարկելու Իրաք: Չակահայկական հակազդեցությունների հավանականությունն այնպիսի մտավախության էր մատնել իրաքահայությանը, որ, օրինակ, Բաղդադի հայերը սկսել էին իրենց երեխաներին տեղափոխել տեղի հայկական դպրոցից, քանի որ այն կարող էր դառնալ ահաբեկչական գործողության թիրախ:

Առանձին տեղեկությունների համաձայն՝ 2003թ. ապրիլի 9-ից մինչեւ 2004թ. օգոստոսը սպանվել են 102 քրիստոնյաներ, որոնց մի մասը՝ ալկոհոլային խմիչքներ վաճառելու կամ ամերիկացիների մոտ թարգմանիչ եւ կամ էլ այլ աշխատանք կատարելու պատրվակով: Դեռեւս 2003թ. նոյեմբերին ահաբեկիչները Բաղդադում սպանեցին

երկու հայ կնոջ, քանի որ նրանք ամերիկացիների մոտ աշխատում էին որպես լվացարարներ:

Հայկական ազգային կամ կրոնական կառույցները եւս զերծ չեն մնացել բռնություններից: Պատերազմից հետո Բասրայի եւ Քիրքուքի հայկական ակունքները կողոպուտի են ենթարկվել: 2004թ. օգոստոսի 1-ի երեկոյան Բաղդադ եւ Մոսուլ քաղաքներում հինգ տարբեր քրիստոնեական ուղղությունների պատկանող եկեղեցիների, ինչպես նաեւ Բաղդադի հայ կաթողիկե եկեղեցու մոտ պայթեցվել են ավտոմեքենաներում տեղադրված ռումբեր, ինչի հետեւանքով զոհվել են 11 մարդ եւ տուժել 47-ը: Առաջին ռումբը պայթել է Բաղդադի Կարադա արվարձանում գտնվող հայ կաթողիկե եկեղեցու մոտ: Առաջին անգամ էր, որ Իրաքի քրիստոնյա փոքրամասնություններն այդ մասշտաբով ենթարկվում էին ահաբեկության: Նույն թվականի դեկտեմբերի 7-ի երեկոյան մի խումբ զինյալներ, ներխուժելով Մոսուլ քաղաքի հայկական եկեղեցին, ուժով դուրս են բերել պահակին եւ եկեղեցուն գտնվող մարդկանց, ապա՝ պայթուցիկ նյութեր տեղադրել եկեղեցուն: Պայթյունից շինությունը մեծապես վնասվել է: Բարեբախտաբար, զոհեր չեն եղել:

Իրաքահայերը, նկատի ունենալով ահաբեկչության սպառնալիքը, որ կարող է ուղղված լինել ազգային եւ կրոնական կառույցներին, խուսափում են մասսայական տեղերում հայտնվելուց: Եկեղեցիների մի մասը չի գործում:

Միեւնույն ժամանակ, սխալ կլինի կարծել, թե իրաքահայերն ահաբեկչության զոհ են դառնում հատկապես իրենց ազգային կամ դավանական պատկանելության պատճառով: Առհասարակ, Իրաքում մարդիկ կարող են զոհվել ամեն պահի՝ շենքում, շուկայում կամ փողոցում տեղադրված ռումբի կամ ինքնասպան ահաբեկչի պայթյունից: «Ասպարեզ» օրաթերթի հաղորդման համաձայն՝ միայն 2003թ. ապրիլի 7-ից մինչեւ 2005թ. հոկտեմբերի վերջը բռնության զոհ են դարձել 18 իրաքահայեր, որոնցից 5-ը զոհվել են ռազմական գործողությունների ընթացքում, մյուսները՝ եկեղեցիներում կամ հասարակական այլ վայրերում կատարված պայթյունների կամ զինյալ խմբավորումների գործողությունների հետեւանքով:

Իրաքի քաղաքացիների համար սպառնալիք են ոչ միայն ահաբեկչական խմբերը, այլեւ կոալիցիոն ուժերը: 2005թ. հոկտեմբերին մեր հայրենակիցներից մեկը սպանվեց ամերիկացի զինվորների կրակոցից, երբ իր ավտոմեքենայով տուն էր վերադառնում:

Երկրում լայն տարածում են գտել հանցագործ խմբերը, որոնք առեւանգում են մարդկանց՝ փրկագին շորթելու համար: Այս պարա-

գայում էթնոդավանական պատկանելությունը դեր չի խաղում: Նման երեւույթների զոհ են դարձել նաեւ մեր հայրենակիցները: 2005թ. ոստիկանական համազգեստով մի քանի անձինք կանգնեցրել են հայ բժշկի ավտոմեքենան, պատանդ վերցրել նրան եւ որպես փրկագին՝ ընտանիքից պահանջել 75 հազար դոլար: Նույն թվականի վերջին անհետացել են երկու հայեր, մեկը՝ գործարար, մյուսը՝ ոսկերիչ: 2005թ. օգոստոսի 21-ին Բաղդադում մի խումբ գրոհայիններ առեւանգել են մի կիպրահայ գործարարի, որը 130 օր հետո ազատ է արձակվել 200 հազար դոլար փրկագնի դիմաց:

Ի դեպ, իրաքահայերից պահանջվել է տուրքեր վճարել մոջահիդներից, իսկ վճարման նվազագույն չափը սահմանվել է ըստ տվյալ ընտանիքի նյութական վիճակի: Հատկանշական է, որ իսլամիստների սպառնալիքներից վախենալով՝ 2006թ. ապրիլին Իրաքի գեղեցկության մրցույթում առաջին տեղը շահած հայուհի Թամարա Կորեկյանը իրաժարվեց ստանալ «Միսս Իրաք» տիտղոսը եւ փախավ Հորդանան:

Այսօր Իրաքում կյանքը կաթվածահար է: Հայաբնակ շրջաններից ամենավտանգավոր գոտին, թերեւս, Բաղդադն է: Իրաքահայերը հայտնվել են անելանելի իրավիճակում. չկա աշխատանք, անվտանգության երաշխիք եւ հեռանկար այդ երկրում ազգային գոյապահպանության համար: Նրանք ճարահատյալ փախչում են երկրից, հաճախ՝ ձեռնունայն: Իրաքից դուրս եկած հայերը հիմնականում հաստատվել են Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում, նաեւ եվրոպական երկրներում (մասնավորապես՝ ՅուԼանդիայում), ԱՄՆ-ում:

Բազմաթիվ իրաքահայեր (հատկապես Բաղդադից) ներկայումս տեղափոխվել եւ բնակություն են հաստատում առավել անվտանգ՝ հյուսիսային քրդաբնակ գյուղատիպ շրջաններում: Դրանցից են Էրբիլի շրջանի Այն Քավա գյուղը, Դոհուքի շրջանում (Զախո քաղաքից 30 կմ հեռավորության վրա) գտնվող Ավզրուք գյուղը եւ այլն: Մեր ունեցած տեղեկություններով՝ Իրաքում ապրող հայերի ներկա թիվն այսօր 10.000-5.000 է:

Իրաքահայերից շատերը հաստատվել են Հայաստանում: Նրանց ներհոսքը դեռեւս շարունակվում է: Իրաքից Հայաստան եկողները դասվում են ժամանակավոր ապաստան հայցողի կարգավիճակ ունեցողների թվին: Նրանցից շատերը հեռանում կամ պատրաստվում են հեռանալ Հայաստանից՝ սոցիալական դժվարությունների պատճառով: Հայաստանում ապաստանած իրաքահայերի ընդհանուր թվի վերաբերյալ Փախստականների եւ գաղթականների վարչությունը հստակ տեղեկություններ չունի: Այսօր չկա որեւէ հաստատություն, որ

կարողանա ստույգ ներկայացնել իրաքահայերի միգրացիոն վիճակագրությունը: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ Հայաստանում այսօր ապրում է մոտ 1.000 իրաքահայ:

Փաստորեն, Հայոց ցեղասպանությունից հետո Իրաքում հաստատված տարագիր հայերի սերունդներն այսօր նորից բռնել են գաղթի ճանապարհը: Կասկածի տակ է Իրաքում հայկական գաղութի հետագա գոյությունը: Իրաքում շարունակում են մնալ այն հայերը, ովքեր այլ երկիր տեղափոխվելու հնարավորություն կամ նոր բնակավայր ընտրելու ցանկություն չունեն:

Թե՛ մեր ժողովրդի պատմության բազմամյա փորձը եւ թե՛ ներկայումս հայկական գաղութներում տիրող իրավիճակը վերստին հաստատում են այն դրույթը, որ հայերի բնակության վայրը պետք է լինի հայրենիքը՝ Հայաստանը: Օտար հողում, ինչպես համոզված էր ժամանակին հայ հասարակական-մշակութային գործիչ Մեսրոպ Թաղիադյանը, ոչինչ պետք չէ կառուցել: Հայաստանից դուրս ազգային գոյապահպանության ցանկացած փորձ ժամանակավոր է եւ անխուսափելիորեն դատապարտված:

**ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱՄՆ–ԻՐԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Փագիկ Տեր-Հարությունյան**

ԱՄՆ—Իրան արդեն մոտ երեք տասնամյակ տեւող առճակատումը թեւակոխում է նոր փուլ, եւ սպասվող զարգացումները, համաձայն վերլուծաբանական հանրության կարծիքի, կարող են հանգեցնել անգամ աշխարհակարգային բնույթի փոփոխությունների:

Ինչպես հայտնի է, ամերիկյան կողմը հետեւողականորեն մեղադրում է Իրանին, թե վերջինս անմիջական օգնություն է ցուցաբերում Իրաքում գործող ահաբեկիչներին: Նման տեղեկատվական քաղաքականությունը ուրվագծում է ԱՄՆ գլխավոր թշնամու՝ Իրանի կերպարը եւ, միաժամանակ, Իրաքում ԱՄՆ կրած անհաջողությունների պատասխանատվությունը կարծես փոխանցում է այդ երկրին: Տեղեկատվական-հոգեբանական ճնշումն Իրանի վրա արտահայտվում է նաեւ նրանում, որ ՁԼՄ-ում կարելի է հանդիպել բազմաթիվ տեղեկությունների եւ վերլուծությունների, թե այս գարնան առաջին ամիսներին ԱՄՆ-ը կարող է նվազագույնը օդային հարված հասցնել Իրանին:

Այսօր հայտնի պաշտոնական եւ ոչ պաշտոնական տեղեկատվությունը, ինչպես եւ քաղաքական զարգացումների տրամաբանությունը վկայում են, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքին (ՄՄԱ) վերաբերող ամերիկյան նախկին եւ ներկա բոլոր ծրագրերը ենթադրում են առնվազն Իրանի թեոկրատիկ վարչակարգի տապալում եւ, հնարավորության պարագայում, անգամ այդ երկրի մասնատում ըստ էթնիկ հատկանիշի:

2006-ի սկզբին, ինչպես եւ այսօր, ամերիկյան գարնանային ռազմական հարձակման հնարավորությունը նույնպես աշխուժորեն քննարկվում էր լրատվամիջոցներում եւ վերլուծական պարբերականներում: Նկատենք, որ նախորդ եւ այս տարվա իրավիճակների միջեւ կան ինչպես նմանություններ, այնպես էլ էական տարբերություններ:

Նմանություններն առաջին հերթին վերաբերում են ընդհանուր քաղաքական իրադրությանը եւ հնարավոր պատերազմի եղանակային ժամկետներին. իրավիճակն Իրաքում 2006-ին սկզբունքորեն շատ չի տարբերվում նրանից, ինչ կա այսօր, իսկ ժամկետների նմանությունը պայմանավորված է զուտ տեխնիկական-օդերեւութաբանական հանգամանքներով. գարնանային ժամանակահատվածն այդ տարածաշրջանում

ամենամասշտաբային և օդուժի եւ թեւավոր հրթիռների կիրառման տեսակետից: Սակայն 2006-ին ԱՄՆ հանրապետական վարչակազմը, հաշվի առնելով աշնանը կայանալիք Կոնգրեսի ընտրությունների գործոնը եւ երկյուղելով, որ իրանյան կամպանիայի հնարավոր անհաջողությունը կհանգեցնի պարտության ընտրություններում, որոշեց չդիմել ռիսկի: Սպիտակ տունը «մեծ պատերազմի» փոխարեն իր դաշնակից Իսրայելի հետ ձեռնարկեց «լուկա», պատժիչ պատերազմ Չիզբալլահ կազմակերպության դեմ, որը քաղաքական առումով նույնացվում է Իրանի հետ: Հաշվարկը կայանում էր նրանում, որ հաղթական եւ արագընթաց ռազմական գործողությունները կբարձրացնեն ԱՄՆ եւ Իսրայելի վարկը եւ կցուցադրեն ամերիկյան մերձավորարեւելյան ռազմավարության արդյունավետությունը: Սակայն տեսական եւ ոչ միանշանակ արդյունքով ավարտված ռազմական գործողությունները միջազգային հանրության կողմից ընկալվեցին որպես ամերիկացիների հերթական անհաջողություն: Դա իր հերթին նպաստեց նրան, որ ընտրություններում ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում էլ դեմոկրատները նվաճեն մեծամասնություն:

Չիզբալլահի դեմ ոչ այնքան հաջող ռազմական գործողությունները որոշ վերլուծաբանների հիմք տվեցին մտածելու, որ այդ պատերազմը դեռեւս «միջանկյալ» բնույթ էր կրում, եւ «մեծ պատերազմը» ՄՄԱ-ում, որը պետք է հստակեցնի, թե «ով ով է» այս տարածաշրջանում, դեռեւս առջեւում է: Կարելի է ենթադրել, որ եթե Իսրայելը (ԱՄՆ-ը) միանշանակ հաղթեր Չիզբալլահին (Իրանին) այդ «միջանկյալ» պատերազմում, ապա դա գուցե բավարար լիներ Միացյալ Նահանգներին «իր դեմքը պահպանելու» համար, ինչը, թերեւս, կնվազեցներ «մեծ պատերազմի» հավանականությունը:

Միեւնույն ժամանակ, 2007թ. իրավիճակը զգալիորեն տարբերվում է նախորդ տարիներից: Այս տարի ԱՄՆ հանրապետական վարչակազմը կաշկանդված չէ ներքաղաքական խնդիրներով, եւ 2007-ը ամենահարմարն է խոշոր գործողություններ ձեռնարկելու համար: Համաձայն ամերիկյան քաղաքական ավանդույթի՝ «զնացող» նախագահն իր իրավասությունների վերջին տարում, այսինքն՝ 2008-ին չի կատարում «անհակադարձելի» քայլեր, որոնք սկզբունքորեն կկաշկանդեն նորընտիր վարչակազմին (անկախ այն բանից՝ նրանք հանրապետականներ են թե դեմոկրատներ) իրագործել սեփական ծրագրերը: Ավելին. տպավորությունն այնպիսին է, որ նախագահական ընտրություններում հանրապետականների հաջողության հասնելու միակ հնարավորությունը հաղթական պատերազմն է ՄՄԱ-ում: Միեւնույն ժամանակ, խնդիրը ոչ միայն այս կամ այն կուսակցության հաղթանակն է ընտրություններում.

հարցադրումը ենթադրում է ավելի բարձր քաղաքական մակարդակ, քանի որ կարծես թե հենց ՄՄԱ-ում է որոշվում ամերիկյան գլոբալ գերակայության հետագա ճակատագիրը: Մինչդեռ զարգացումներն այդ տարածաշրջանում առայժմ մեծ լավատեսություն չեն ներշնչում ամերիկացիներին:

Այսօր առավել, քան նախկինում, լրջացել են Իրանի կողմից նետված մարտահրավերները: Հասնելով հաջողության «միջանկյալ» պատերազմում՝ այդ երկիրը մեծացրել է ազդեցությունը ՄՄԱ-ում եւ անշեղորեն իրագործում է իր միջուկային ծրագիրը: Դա կարող է փոխել ոչ միայն տարածաշրջանային, այլեւ գլոբալ ռազմաքաղաքական պատկերը: Նկատենք, որ այսօր Իրանը որոշ արեւմտյան քաղաքագետների կողմից արդեն ընկալվում է որպես «տարածաշրջանային գերտերություն»:

Իր հերթին, ԱՄՆ շահերի տեսակետից՝ գործընթացներն այդ տարածաշրջանում երկակի մեկնաբանությունների առիթ են տալիս: Հարվածելով Իրաքին եւ մասնատելով այդ երկիրը՝ ԱՄՆ-ը կարծես թե լուծեց մի շարք ռազմավարական խնդիրներ: Սակայն զուգահեռ ծագեցին նոր հիմնախնդիրներ: Իրաքյան Քրդստանի հետ կապված հայտնի զարգացումները խարխլեցին ԱՄՆ եւ Իսրայելի հարաբերությունները Թուրքիայի հետ, որը նախկինում համարվում էր այդ երկրների հիմնական ռազմավարական գործընկերը:

Իր հերթին, Քրդստանի փաստացի անկախությունը նույնպես դժվար է անվերապահորեն ընդունել որպես հաջող ձեռքբերում: Քրդերի աջակցությունը Միացյալ Նահանգներին, անշուշտ, լուրջ մարտավարական նշանակություն ունի: Սակայն քրդական գործոնը մշտապես անորոշություններ է պարունակում, եւ երկարաժամկետ հեռանկարում զարգացումները կարող են եւ նպաստավոր չլինել ԱՄՆ-ի համար:

Իրաքի մասնատումն առաջացրել է նաեւ մեկ այլ, գուցե եւ ավելի կարեւոր հիմնախնդիր: Շիաների իշխանության գալը զգալիորեն մեծացրեց Իրանի ազդեցությունն այդ երկրում: Այսինքն՝ դեռ վաղ է միանշանակ գնահատական տալ, թե որ սցենարն էր ավելի նպաստավոր ԱՄՆ-ի եւ Իսրայելի համար. սուննիների իշխանության տակ գտնվող եւ Իրանի հետ առճակատման մեջ գտնվող միասնակա՞ն Իրաքը, թե՞ մասնատված, սակայն Իրանի ակնհայտ ազդեցության տակ գտնվող եւ փաստացի շիական ինքնավարություն ունեցող Իրաքը:

Այսպիսով, ՄՄԱ-ում ամերիկյան ռազմավարությունը, որի հենքում, մասնավորապես, ընկած է տարբեր էթնիկական, կրոնադավանական խմբերի եւ կազմակերպությունների (օրինակ՝ Համասի եւ Ֆաթհի) միջեւ հակամարտությունների հրահրումը, կարելի է երկակի գնահատել: Ակնհայտ է, որ որոշ հարցերում ամերիկացիները հասել են անժխտելի

հաջողությունների. այսօր տարածաշրջանում ընթանում են միջէթնիկ եւ միջդավանական բախումներ (որոնք անհասկանալի կերպով անվանվում են քաղաքացիական պատերազմ): Անշուշտ, նման պատերազմն ավելի վերահսկելի է դարձնում այդ աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական առումով կարելոր տարածաշրջանը: Սակայն վերոնշյալ զարգացումներն առաջացնում են հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ոչ պակաս ռեսուրսներ:

Այս ամենի համատեքստում, ամենավիճահարույց հարցն է, թե արդյոք ԱՄՆ ռեսուրսները կբավարարեն հաղթելու այս նոր պատերազմում: Աշխարհաքաղաքական «մեծ խաղում» ԱՄՆ հիմնական խաղաքարտերն են համալիր քաղաքականություն վարելու կարողությունը եւ տեխնոլոգիական-ռազմական թերեւս բացարձակ գերակայությունը: Հատկանշական է, որ ռազմական ոլորտում ԱՄՆ-ը վերջերս իրագործեց վճռական քայլեր: Մասնավորապես, որոշում ընդունվեց՝ Իրաք ուղարկել լրացուցիչ 21.500 զինծառայող, իսկ Պարսից ծոց տեղափոխել (ի լրումն այնտեղ գտնվող «էյզենհաուեր» ավիակրի) ավելի քան 70 ինքնաթիռ ունեցող «Ջոն Սթենիս» ավիակիրը եւ նրան ուղեկցող 5 ռազմանավեր: Վերջապես նախագահ Բուշը դիմեց Կոնգրեսին ռազմական կարիքների համար ամնախադեպ մեծ գումարներ (մոտ \$760 մլրդ) տրամադրելու առաջարկությամբ:

Կատարվեցին նաեւ ուշադրության արժանի կադրային նշանակումներ: Ինչպես հայտնի է, իրաքյան եւ աֆղանական ռազմական գործողությունների թատերաբեմի պատասխանատուն ԱՄՆ զինված ուժերի Կենտրոնական հրամանատարությունն է (ԿՀ): Վերջերս ԿՀ հրամանատար նշանակվեց Իրանի հանդեպ հարձակողական տրամադրված ծովակալ Ուիլյամ Ֆալոնը, որը փոխարինեց ծագումով լիբանանցի գեներալ Ջոն Աբիզայդին: Նշենք նաեւ, որ ԱՄՆ նոր Պաշտպանության նախարարի նշանակումը հաճախ մեկնաբանվում է որպես «բազե» Ռամսֆելդին Իրանի հետ բանակցություններ վարելու կողմնակից Գեյթսով փոխարինում: Սակայն այս «փոխատեղումը» կարելի է երկակի գնահատել: Գեյթսը մինչ նոր նշանակումը ԿՀ-ի տնօրենն էր եւ, թերեւս, լավագույնս իրազեկ է ՄՍԱ-ում անցուդարձին: Ամերիկյան ռազմական համակարգը, ինչպես հայտնի է, գործում է գրեթե անխափան, եւ Ռամսֆելդի խնդիրը Պենտագոնի քաղաքական ուղղորդումն էր: Արեւելյան «նրբություններին» պրոֆեսիոնալ մակարդակով տեղեկացված Գեյթսի խնդիրը կարող է լինել ամերիկյան ռազմական մեքենան մերձավորարեւելյան իրողություններին համարժեք եւ այդպիսով ավելի արդյունավետ կիրառելը:

Փաստերի այս համախումբը վկայում է, որ Միացյալ Նահանգների զինուժը Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու բարձր պատրաստվածություն է ձեռք բերել: Նույնը կարելի է ասել շարունակաբար նոր զինտեխնիկայի օգտագործմամբ զինավարժություններ անցկացնող Իրանի մասին: Ստեղծված իրադրությունում հնարավոր են հետագա զարգացման մի շարք սցենարներ:

1. ԱՄՆ գործողությունները ենթարկվում են «սպառնալիքը ավելի գործուն է, քան նրա իրագործումը» ստրատեգիական սկզբունքին եւ նպատակ ունեն ռազմական-քաղաքական եւ տեղեկատվական-հոգեբանական ճնշումների միջոցով ստիպել Իրանի իշխանություններին գնալ որոշակի զիջումների: Դա թույլ կտա ԱՄՆ-ին պահպանել իր վարկանիշը եւ գոնե մասնակիորեն լուծել տարածաշրջանային խնդիրները:

2. Իրանը չի գնում զիջումների, իսկ ամերիկյան վարչակազմը, ելնելով ներքաղաքական (ճնշումներ Դեմոկրատական կուսակցության կողմից), արտաքին քաղաքական (միջազգային հանրության հնարավոր կտրուկ արձագանքը) կամ էլ զուտ ռազմական (իրանական ԶՕՊ համակարգի էֆեկտիվությունը, պատասխան ասիմետրիկ հարվածի հնարավորությունը) նկատառումներից, չի գնում ռազմական առճակատման: Դա կարող է ընկալվել որպես ԱՄՆ-ի թուլություն եւ կբերի նրա գերակայության մասնավոր կորստի գլոբալ հարթությունում:

3. ԱՄՆ-ը իրականացնում է կարճաժամկետ օդային հարված Իրանին՝ առանց վերջնագրեր ներկայացնելու: Այդ գործողությունները նպատակ չունեն տապալել Իրանի վարչակազմը կամ երկրում միջէթնիկական եւ միջկրոնական բախումներ հրահրել, այլ լուծում են որոշակի՝ միջուկային օբյեկտների ոչնչացման մարտավարական խնդիրը: Նման սցենարը թույլ կտա ԱՄՆ-ին համեմատաբար պատվով լքել տարածաշրջանը եւ պահպանել իր միջազգային հեղինակության զգալի մասը:

4. ԱՄՆ-ը իրականացնում է «հարավսլավական տարբերակը», երբ օդային հարվածները ժամանակային սահմանափակումներ չունեն եւ շարունակվում են, մինչեւ Իրանի կողմից վերջնագրի ընդունումը: Երկարատեւ օդային հարվածները, որոնք զուգորդվում են հատուկ նշանակության գործողություններով, կարող են հանգեցնել միջէթնիկական եւ միջկրոնական բախումների եւ, ի վերջո, Իրանի կազմալուծմանը իրաքյան սցենարով: Նման զարգացումը կստեղծի քառսային իրադրություն տարածաշրջանում, որի հետեւանքներն էապես կազդեն նաեւ գլոբալ գործընթացների վրա:

**ՉԻՆԱՍՏԱՆՆ ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
Սուրեն Սարյան**

Մառ Ցզեդունի «փակ կառավարման» շրջանից հետո, երբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը գրեթե չուներ հարաբերություններ Արեւմուտքի եւ ԽՍՀՄ-ի հետ, արդեն Դեն Սյաոպինի կառավարման շրջանում իրականացվեցին լուրջ բարեփոխումներ, երբ շեշտը դրվեց միջազգային առևտրի եւ ներդրումների խթանման վրա, ինչի արդյունքում Ժամանակակից Չինաստանը մուտք գործեց համաշխարհային շուկա՝ տարեցտարի աճող տնտեսությամբ (արդեն 28 տարի է, ինչ նրան հաջողվում է ապահովել 10% տնտեսական աճ): Չինաստանը փաստորեն անցավ արդիականացման փուլով, որը դարձրեց նրան համաշխարհային լուրջ խաղացող:

Հատկանշական է, որ վերջերս Չինաստանի Կոմկուսը սկսել է խրախուսել այդ երկրի՝ համաշխարհային տերության կարգավիճակի ձգտման հրապարակային քննարկումները, ինչը մինչ այդ համառորեն մերժվում էր Պեկինի իշխանությունների կողմից: «Վերելք» կամ «աճ» հասկացությունը սկսում է նշանակել Չինաստանի ոչ միայն տնտեսական զարգացում, այլ նաեւ մեծ տերության կայացում:

Չինաստանի արտաքին քաղաքական հայեցակարգը, որը կրում է «խաղաղ աճ» անվանումը, հիմնված է փոխշահավետության սկզբունքի վրա, այն չափազանց պրագմատիկ եւ իրատեսական է: Չինաստանի միջազգային ազդեցության ուժեղ կողմն այն է, որ նրա արտաքին քաղաքականությունը չի կրում գաղափարախոսական մոտեցումներ: Այս մոտեցումը գալիս է չինական մտածելակերպից, որտեղ գաղափարները երկրորդական են ազգային շահերի դիմաց:

Իրոք, Պեկինի իշխանությունների համար չկա որեւէ տարբերություն, թե ում հետ նրանք գործ ունեն. ՉԺՀ-ի համար առաջնահերթությունը փոխշահավետ տնտեսական կապերի զարգացումն է առևտրի եւ ներդրումների միջոցով: Անգամ Թայվանի համար հենց ՉԺՀ-ն է այսօր արտաքին եկամուտների հիմնական աղբյուրը՝ չնայած քաղաքական առճակատմանը:

Փաստորեն Չինաստանը փորձում է վստահեցնել բոլորին, որ իր աճը չի ստեղծում որեւէ սպառնալիք խաղաղությանն ու կայունությանը,

եւ բոլոր մնացած ժողովուրդները միայն օգուտ կքաղեն դրանից: Այս դոկտրինն, այսպիսով, շեշտը դնում է «մեղմ» իշխանության սկզբունքի վրա, ինչպես նաեւ ցույց է տալիս ՉԺՀ-ի ձգտումը խուսափել ԱՄՆ-ի հետ որեւէ առճակատումից:

ԱՄՆ—ՉԺՀ հարաբերությունները կազմում են ներկայիս չինական արտաքին քաղաքականության առանցքը: Այդ հարաբերությունների պարադոքսն այսօր այն է, որ, մի կողմից, Միացյալ Նահանգները կարող է դառնալ Չինաստանի քաղաքական նպատակների իրականացման ճանապարհին գլխավոր արգելքը, եւ, մյուս կողմից, ԱՄՆ-ը մնում է Չինաստանի տնտեսական վերելքի անփոխարինելի գրավականը:

Որոշ փորձագետներ խոսում են չին-ամերիկյան գալիք անխուսափելի հակամարտության մասին: Միացյալ Նահանգներն իրենց ռազմական եւ քաղաքական ներկայությամբ դարձել են փաստորեն Չինաստանի «հարեւանը», եւ Պեկինում այս պահն անտեսել չեն կարող: Այսօր չինական քաղաքական եւ փորձագիտական շրջանակներում առկա են լուրջ մտահոգություններ՝ կապված ԱՄՆ-ի կողմից Չինաստանը ստրատեգիական շրջապատման մեջ վերցնելու վտանգի հետ: Որպես դրա ապացույց են բերվում ամերիկյան ռազմական ներկայությունը Ղրղզստանում եւ Աֆղանստանում, ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արեւելք, ԱՄՆ—Հարավային Կորեա եւ ԱՄՆ—ճապոնիա ռազմաքաղաքական դաշինքները եւ ամերիկյան պարտավորությունները Թայվանի նկատմամբ՝ պաշտպանելու այն չինական ներխուժման դեպքում, ինչպես նաեւ ռազմավարական գործընկերության զարգացումը ԱՄՆ-ի եւ Հնդկաստանի միջեւ:

Պեկինին անհանգստացնում է նաեւ այն, որ «չինական վտանգի» տեսության կողմնակիցները կարող են իշխանության գալ Վաշինգտոնում եւ ժամանակից շուտ հարված հասցնել Չինաստանին՝ սեփական գերիշխանության անկումը եւ Չինաստանի վերելքը կանխելու նպատակով: Այս իմաստով սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ի քաղաքականությունը Պեկինի որոշ շրջանակների կողմից հաճախ դիտարկվում է որպես Չինաստանի հզորության աճը զսպելու ուղղված կուրս:

Պեկինի «ուղեղային կենտրոնների» հետազոտողների կողմից Չինաստանի համար հատկապես ռիսկային է համարվում 2020-2030 ժամանակահատվածը, երբ Միացյալ Նահանգներն ի վերջո կգիտակցի, որ չինական հզորությունը պատրաստ է գերազանցել ամերիկյանին, եւ, ինչպես հին ժամանակներում, հեգեմոնը փորձելու է ստեղծել դաշինք՝ պարտության մատնելու իրեն սպառնացնող աճող տերությանը:

Իր հերթին չինական ռազմավարությունը չի բացառում ԱՄՆ-ի շահերի դեմ դաշինքների ձևավորումը՝ սեփական դիրքերն ամրապնդելու համար: Դրանով է նաև բացատրվում այսօրվա չինական ներթափանցումը Աֆրիկա, Լատինական Ամերիկա, Կենտրոնական եւ Արեւելյան Ասիա. որքան շատ խնդիրներ ունենա Միացյալ Նահանգներն այդ տարածաշրջաններում, այնքան քիչ ուժեր եւ ռեսուրսներ կունենա Չինաստանի վրա կենտրոնանալու համար: Այս համատեքստում էական են նաև ճապոնիայի ու ԵՄ-ի հետ Չինաստանի մերձեցմանն ուղղված քայլերը, քանզի այդ երկու ուժային կենտրոնները կարող են մոտ ապագայում ԱՄՆ-ին հակակշիռներ դառնալ:

Մյուս տեսակետը, սակայն, այն է, որ ԱՄՆ-ը, Եվրոպան եւ Ճապոնիան նորից կարող են միավորել իրենց ջանքերը՝ ամեն գնով զսպելու Չինաստանին: Այդ դեպքում ՉԺՀ-ն կզգա Ռուսաստանի կարիքը՝ որպես նոր «մեծ պատի»: Այսինքն՝ Ռուսաստանին իր տնտեսական եւ ռազմական շուկաներից կախյալ դարձնելով՝ Չինաստանը ձեռք կբերի հզոր լծակ Արեւմուտքի վրա ազդելու համար:

Դրա հետ մեկտեղ առկա է նաև չին-ամերիկյան փոխկախվածության շարունակական աճ. ԱՄՆ-ն ու ՉԺՀ-ն այսօր աշխարհի խոշորագույն առևտրական գործընկերներն են (Չինաստանի արտահանման 21%-ը գնում է ԱՄՆ): Ավելին, Չինաստանի պաշտոնական քաղաքականությունը Միացյալ Նահանգները դիտարկում է որպես ռազմավարական գործընկեր: Չնայած Պեկինում իշխում է կոմունիստական կուսակցությունը, սակայն ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի միջև գոյություն չունի որևէ գաղափարախոսական առճակատում, որը հատուկ էր խորհրդա-ամերիկյան սառը պատերազմին:

Ի հավելումն, ԱՄՆ-ում այժմ գոյություն ունի բավական ազդեցիկ, այսպես կոչված, «չինասերների կուսակցություն», որի ներկայացուցիչ Ռոբերտ Ջեյլիկը, որը մինչև վերջերս զբաղեցնում էր պետքարտուղարի տեղակալի պաշտոնը, նշում է, որ ԱՄՆ-ն ու ՉԺՀ-ն պետք է իրենց համագործակցությամբ ամրապնդեն գլոբալ բարեկեցությունը եւ օգտվեն դրա պտուղներից: Եվ այս առումով ԱՄՆ-ի համար Չինաստանի տնտեսական վերելքը ստեղծում է նոր հնարավորություններ: Միաժամանակ, Չինաստանը պետք է նաև ստանձնի միջազգային պատասխանատվության իր մասը: Այդ նպատակով Վաշինգտոնը պետք է վարի Պեկինի նկատմամբ «բաց դռների» քաղաքականություն՝ աջակցելով Չինաստանի զարգացմանը եւ ապահովելով նրա դիրքերը միջազգային համակարգում, որպեսզի Պեկինը մարտահրավեր չնետի այդ համակարգին:

Չենրի Քիսինջերը եւ Ջբիգնեւ Բժեզինսկին, որոնք եղել են Չինաստանի նկատմամբ ամերիկյան ռազմավարության մշակողներն ու կատարողները, նույնպես պնդում են, որ անհրաժեշտ է Չինաստանը ներգրավել միջազգային համակարգի մեջ՝ որպես կայունության գործոն, այլ ոչ իբրեւ ինչ-որ բազմաբեւեռ ընդհանրության մի մաս, որը գործում է ի հակադրություն ամերիկյան գերտերության:

Փաստորեն, ամերիկյան ստրատեգներն առաջարկում են Չինաստանը դարձնել համաշխարհային քաղաքականության «փայտերերից» մեկը, որը նույնքան շահագրգռված կլինի այդ քաղաքականության կայունության եւ գլոբալ տնտեսության զարգացման մեջ, որքան ԱՄՆ-ը, Եվրոպան կամ Ճապոնիան:

Այդուհանդերձ, Ռիչարդ Նիքսոնն ու Չենրի Քիսինջերը, որոնք վերականգնեցին ԱՄՆ-ի հարաբերությունները Չինաստանի հետ եւ հիմք դրեցին այսօրվա չին-ամերիկյան համագործակցությանը, շեշտում էին, որ չպիտի թերագնահատել Չինաստանի հնարավորությունները՝ ամերիկյան շահերին եւ անվտանգությանը լուրջ վնաս հասցնելու գործում, եթե վերոհիշյալ հարաբերությունները մի օր դառնան թշնամական: Քիսինջերի կարծիքով, «այո, կարող է այնպես պատահել, որ Չինաստանը դառնա մեր հակառակորդը: Սակայն դա կանխորոշված չէ: Եվ դա չպիտի լինի մեր գործողությունների արդյունքում»:

Միաժամանակ, Չինաստանը շրջապատված է ամենեւին ոչ թույլ երկրներով, որոնցից յուրաքանչյուրն ունակ է անգամ միայնակ դիմագրավել չինական հավանական արտաքին գրոհներին, ինչպես, օրինակ, Չնդկաստանը, Ճապոնիան, Ռուսաստանը: Այդ ամենը պարտադրում է Պեկինին լինել զուսպ իր հավակնություններում եւ չդիմել արկածախնդրությունների, այլ ստեղծել տնտեսական փոխկախվածության մի ընդարձակ ցանց վերոնշյալ երկրների հետ: Իսկ նման իրավիճակը լիովին համապատասխանում է ԱՄՆ-ի «օֆշորային հավասարակշռման» ուղեգծին, որը թույլ չի տա որեւէ տերության Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում դառնալ գերիշխող ուժ:

Այսպես, պատմական հակասությունները Ճապոնիայի հետ եւ ներկայիս մրցակցությունը Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում առաջնորդության, ծովային սահմանների որոշման եւ էներգետիկ պաշարների շահագործման հարցերում վկայում են, որ Չինաստանի եւ Ճապոնիայի միջեւ կարող է հասունանալ լուրջ առճակատում: Երկու տերություններն էլ ուշադիր հետեւում են իրար. երկուսն էլ շահագրգռված են, որ հակառակ կողմի ռազմական ուժը մնա սահմանափակված: Պետք է նաեւ հաշվի առնել, որ, չնայած չինական «տնտեսական հրաշքին»,

ճապոնիայի տնտեսական զարգացումն իր տեմպերով այսօր էլ երեք անգամ գերազանցում է չինականին: Ճապոնիան նույնպես կարող է օգտվել չինական ռազմավարությունից. սպասելով իր ժամանակին՝ հետևել ՉԺՀ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ պայքարին, նրանց ուժերի սպառումից հետո Ասիայում իր գերիշխանությունը հաստատելու համար:

Չնդկաստանի առումով եւս Պեկինում առկա են մտահոգություններ, թե հնդկական միջուկային կարգավիճակը նպատակաուղղված է ոչ միայն եւ ոչ այնքան Պակիստանի զսպմանը, որքան հենց Չինաստանի հավակնություններին հակակշռելուն: Մյուս կողմից, երկուսն էլ այսօր աշխարհի ամենամեծ զարգացող երկրներն են, որոնք ունեն մի շարք փոխկապակցող պայմանագրեր տնտեսական եւ առևտրային ոլորտներում: Սակայն արեւմտյան սահմաններում Պեկինի համար այսօր առավել վստահելի գործընկեր է Պակիստանը, ինչի մասին Դելիում չեն մոռանում:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինս թեեւ համարվում է ՉԺՀ գործընկերը, սակայն չի բացառվում, որ ապագայում այն դառնա սպառնալիք Չինաստանի անվտանգության համար: Առայժմ Չինաստանը քայլ առ քայլ հաստատում է իր ժողովրդագրական, տնտեսական եւ ենթակառուցվածքային վերահսկողությունը Յեռավոր Արեւելքի եւ Արեւելյան Սիբիրի նկատմամբ: Մինչդեռ, Ռուսաստանի նախագահը վերջերս հայտարարեց, թե Յեռավոր Արեւելքում ստեղծված իրավիճակը «լրջագույն սպառնալիք» է ազգային անվտանգությանը:

Վերոնշյալ գործոնները ստիպում են Չինաստանին շեշտը դնել տնտեսական եւ առևտրային կապերի ընդլայնման վրա: Նույն ճապոնիայի, Չնդկաստանի եւ Ռուսաստանի հետ այսօր հաջողությամբ ընդլայնվում է տնտեսական գործընկերությունը: Կնքվել են նաև ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրեր ԱՄԵԱՆ-ի երկրների հետ:

Պեկինը հետևողականորեն մեծացնում է ազդեցությունն Աֆրիկայում: Այսօր Չինաստանը դարձել է աֆրիկյան երկրների երրորդ տնտեսական գործընկերը՝ ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից հետո եւ մայրցամաք երկրորդ արտահանողը՝ նույն Ֆրանսիայից հետո: 2006թ. նոյեմբերին Պեկինում կայացավ Չինաստան—Աֆրիկա համագործակցության գագաթաժողովը՝ աֆրիկյան 48 պետությունների ղեկավարների մասնակցությամբ, ինչն այդ մայրցամաքում չինական ազդեցության կտրուկ աճի վկայությունն է: Իսկ վերջերս ՉԺՀ նախագահ Յու Չինթաոն այցով գտնվում էր Աֆրիկայի ութ երկրներում: Աֆրիկյան երկրները հաճախ են բերում Չինաստանի օրինակը՝ որպես իրենց համար զարգացման լավագույն մոդել:

Բավական ակտիվ է ընթանում չինական ներթափանցումը Լատինական Ամերիկայի երկրներ: Այստեղ ծրագրվում է մոտակա տասնամյակում իրականացնել մոտ 100 մլրդ դոլարի չինական ներդրումներ, այդ թվում՝ Բրազիլիայում, Վենեսուելայում եւ Կուբայում:

Ակնհայտորեն աճում է չինական ազդեցությունը նաեւ Կենտրոնական Ասիայում, որը դարձել է ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնական աղբյուրներից մեկը: Վերջերս Ղազախստանի վարչապետ նշանակվեց Պեկինում ուսում անցած եւ «չինասերի» համբավ ունեցող ուլդուր: Չինական ընկերություններն ակտիվ ներդրումներ են կատարում Կասպիական ավազանի երկրներում: Արդեն գործում է Ղազախստանից Չինաստան հասնող նավթամուղը: Նախատեսվում է մոտակա երկու տարում կառուցել դեպի Չինաստան տանող գազամուղներ Ղազախստանից եւ Թուրքմենստանից: Իսկ Շանհայի համագործակցության կազմակերպության միջոցով Պեկինը կարողանում է ապահովել նաեւ իր քաղաքական եւ ռազմական ազդեցությունը տվյալ տարածաշրջանում:

Փաստորեն, Չինաստանին արդեն հաջողվեց խախտել Ռուսաստանի մենիշխանությունը Կենտրոնական Ասիայում, թեեւ ճանապարհը նրա համար բացեց ԱՄՆ-ը, երբ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո հաստատեց իր ռազմական ներկայությունն այստեղ:

Իրոք, Չինաստանը կարելի է դիտել որպես XXI դարի «ծագող» գերտերություն: Այդուհանդերձ, առկա են մի շարք տնտեսական, քաղաքական եւ ժողովրդագրական խնդիրներ, որոնք Չինաստանը պետք է հաղթահարի՝ գերտերություն կոչվելու համար: Այսօր նրա ազդեցությունը միջազգային ասպարեզում որեւէ կերպ համեմատելի չէ Միացյալ Նահանգների կամ նույնիսկ նախկին Խորհրդային Միության ազդեցության հետ:

Բացի երկրի հարեւանների հնարավոր հակազդեցությունից, Չինաստանի համար գլխավորն է մնում ներքին կայունության պահպանումը: Այս առումով առկա են լուրջ խնդիրներ մարդու իրավունքների, ազգային եւ կրոնական փոքրամասնությունների, Տիբեթի եւ Սինցյան-Ուլդուրական նահանգի անջատողականության հետ կապված հարցերում:

Թեպետ ռազմական ուժի տեսանկյունից Չինաստանի 2,2 միլիոնանոց բանակն այսօր աշխարհում ամենախոշորն է, իսկ ԿՅՎ աղբյուրները նշում են, որ Չինաստանի ռազմական ծախսերն իրականում երկու կամ երեք անգամ ավելի են, քան պաշտոնապես հայտարարված 35 մլրդ դոլարի ռազմական բյուջեն, այդուհանդերձ, ճեղքվածքը ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի

ռազմական հզորության միջև դեռ երկար ժամանակ մնալու է Պեկինի համար անհաղթահարելի: Չինական նավատորմը եւ օդուժն իրենց ծավալներով չեն հասել ոչ միայն ամերիկյանին կամ ռուսականին, այլև նույնիսկ բրիտանականին եւ ֆրանսիականին: Բացի այդ, Չինաստանի ռազմական արդիականացումը խրախուսելու է ՉԺՀ-ի հարեւանների՝ Ռուսաստանի, Ճապոնիայի եւ Հնդկաստանի ակտիվությունը նույն ուղղությամբ, ինչը Պեկինին մաներելու մեծ տարածք չի թողնում:

Չգալի են նաեւ տնտեսական պրոբլեմները, որոնք կարող են էապես խոչընդոտել Չինաստանի՝ որպես համաշխարհային գերտերության, կայացմանը: Դա նաեւ զանգվածային գործազրկությունն է, ճեղքվածքը երկրի արեւելյան ծովային նահանգների եւ արեւմտյան ներքին նահանգների, ինչպես նաեւ քաղաք—գյուղ կենսամակարդակների միջև, ինչի արդյունքում վերջերս ՉԺՀ-ում հաճախակիացել են սոցիալական հողի վրա հուզումները:

Չնայած Չինաստանի էժան աշխատուժը եւ արտոնյալ ներդրումային պայմանները դարձրել են այն, այսպես կոչված՝ համաշխարհային «արհեստանոց», Չինաստանը չի տիրապետում այն բարձր տեխնոլոգիաներին, որոնք ունեն ԱՄՆ-ը, Եվրոպան եւ Ճապոնիան:

Իր բացասական դերն է խաղում ժողովրդագրական գործոնը: Արագ է ընթանում ՉԺՀ-ի բնակչության ծերացումը եւ, ըստ տարբեր կանխատեսումների, 2020թ. երկրի բնակչության 25%-ը կազմելու են թոշակառուները, ինչն էապես ազդելու է տնտեսական զարգացման ընթացքի վրա:

Չինաստանի «վերելքի» խոցելի տեղերից է նրա էներգետիկ անվտանգությունը, որը ստիպելու է նրան ակտիվացնել գործողությունները Կենտրոնական Աիսայում եւ Կասպիական ավազանում: Այն դառնալու է չինական ներքին ու արտաքին քաղաքականության օրակարգի գերակայող թեման, քանզի երկրի տնտեսական զարգացումը մեծ մասամբ կախված է լինելու էներգետիկ ռեսուրսների ապահովումից: Մինչդեռ Միացյալ Նահանգների արդի քաղաքականությունն ուղղված է համաշխարհային նավթային եւ գազային շուկաների նկատմամբ Չինաստանի մուտքը սահմանափակ պահելուն: Առավել էս, որ Չինաստանի էներգետիկ ռեսուրսների 60%-ը մատակարարվում է Պարսից ծոցի ավազանից, որը համարվում է ԱՄՆ-ի կենսական շահերի ոլորտը:

Այսպիսով, առաջիկա տասնամյակներում Չինաստանը մնալու է աշխարհի առավել ազդեցիկ խաղացողներից մեկը, եւ ինչքան աճելու է Չինաստանի տնտեսական հզորությունը, այնքան փոփոխություններ է

կրելու չհնական ռազմավարությունը եւ վերաբաշխվելու են նրա շահերն ու ռեսուրսները: Սակայն, հաշվի առնելով ազգային հոգեբանության առանձնահատկությունները եւ տնտեսական ու ռազմական հնարավորությունների սահմանափակվածությունը, կարելի է կանխատեսել, որ մոտ ապագայում Չինաստանի ռազմավարությունը դժվար թե միտված լինի դեպի արտաքին ծավալապաշտություն:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով չհնական ռազմավարական մտքի փակ բնույթը՝ ապագայի միջազգային հարաբերություններում Չինաստանի քաղաքականության եւ դիրքորոշման մասին չի կարելի միանշանակ խոսել: Անցած տարիների ընթացքում եղան արտահոսքեր Չինաստանի Կոմկուսի կենտրոնում քննարկվող ռազմավարության վերաբերյալ, որում ամենեւին չեն բացառվում մոտակա տասնամյակում առճակատման սցենարները ԱՄՆ-ի, Ռուսաստանի կամ ճապոնիայի հետ: Այս առումով, տեղին է հիշել չհնական բարեփոխումների ճարտարապետ Դեն Սյաոպինի ձեւակերպումներն այն մասին, որ Չինաստանը պետք է «թացքնի իր ուժը եւ ցույց տա անորոշություն», ինչպես եւ՝ «ժամանակ շահի ու ուժեր հավաքի»:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Դավիթ Հովհաննիսյան**

2007թ. սկիզբը նշանավորվեց միջազգային թատերաբեմի մի քանի աչքի ընկնող դերակատարների անհանգստացնող հայտարարություններով, որոնց ազդեցության տակ համաշխարհային մամուլը շտապեց հայտարարել նոր սառը պատերազմի հնարավոր սկզբի մասին: Ռուսաստանի նախագահ Պուտինի՝ Մյունխենում արտասանած ճառն անմիջապես համեմատեցին Ու.Չերչիլի ֆուլտոնյան ճառի հետ, իսկ ԱՄՆ պաշտպանության նախարարի հայտարարությունն այն մասին, թե Լեհաստանում եւ Չեխիայում տեղադրվելու են հակահրթիռային պաշտպանության համակարգեր, որոնք, ինչպես շեշտվում է, ուղղված են Իրանի հնարավոր հրթիռային հարվածները կանխելու նպատակին, առիթ դարձան ռուսական ՋԼՄ-ի համար՝ հայտարարելու, թե Ռուսաստանը նորից գտնվում է թշնամիների շրջապատման մեջ:

Այս ամենը մեզ վերստին պարտադրում է, նախեւառաջ, փորձել հասկանալ աշխարհում եւ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների ներքին իմաստը, ըմբռնել դրանց միտումները: Հատկապես նորանկախ եւ մեծ ռեսուրսներ չունեցող երկրների համար շատ կարեւոր է այդ ամենն արագ անել, որպեսզի հնարավոր լինի հերթական մարտահրավերներին համարժեք պատասխաններ նախապատրաստել:

Ասվածն, առաջին հերթին, վերաբերում է ժամանակակից աշխարհում ակնհայտ կամ աննկատ գոյություն ունեցող անվտանգության համակարգերի գործողության հիմնական սկզբունքների, դրանց կառուցվածքի եւ վերջիններիս ներսում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցության ճիշտ ըմբռնմանը եւ գնահատմանը:

Բոլոր պատմական ժամանակաշրջաններում համաշխարհային կայունությունն ապահովվել է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնց հիմքում ընկած է եղել այդ կայունության հիմնաքարը՝ իրար հակազդող ուժերի մոտավոր հավասարությունը: Դեռ նապոլեոնյան պատերազմներից հետո, հիմնականում շնորհիվ Մեծ Բրիտանիայի հեռատես քաղաքականության, Եվրոպայում ձեւավորվեց ուժերի այնպիսի հավասարություն, որը թույլ տվեց մինչեւ 1870-ականները (երբ Պրուսիայի ուժեղանալով եւ իր շուրջը գերմանական պետությունները միավորելով՝

այդ հավասարությունը խախտվեց) խուսափել եվրոպական մեծ բախումներից:

Ուժերի հավասարությունն ընկած էր նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձեւավորված միջազգային համակարգի հիմքում, որի հեղինակները՝ 20-րդ դարի երեք խոշորագույն քաղաքական այրեր Ի.Ստալինը, Ու.Չերչիլը եւ Ֆ.Ռուզվելտը, կարողացան նախագծել եւ իրականացնել կայունությունն ապահովող եւ ուժերի համեմատական հավասարության վրա հիմնված նոր աշխարհակարգ:

Սառըպատերազմյան լարվածությունը երկու համաշխարհային ուժային բեւեռների միջեւ, այնուամենայնիվ, չվերաճեց լայնածավալ պատերազմի, այլ սահմանափակվեց լոկալ բնույթ ունեցող պատերազմներով եւ բախումներով միջանկյալ տարածքներում, օրինակ՝ Վիետնամում կամ Աֆղանստանում:

Խորհրդային Միության քայքայումն ազդարարեց ուժերի հավասարության սկզբունքի վրա հիմնված՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված աշխարհակարգի վերջը:

1991թ. մինչեւ 2006թ. ընկած անցումային շրջանում Միացյալ Նահանգները մնաց միակ ուժը, որն անվերապահորեն ճանաչվեց գերիշխող, ինչը նշանակում էր, որ հենց այս երկիրը պետք է ստանձներ համաշխարհային կառավարման դերը եւ իր վրա վերցներ նոր աշխարհակարգի ձեւավորումը: Սակայն այս անցումային տարիներին Միացյալ Նահանգներում չհասցրեց ձեւավորվել նոր իրավիճակին համապատասխանող մտածելակերպ եւ ապագայի իրական տեսլականներ ունեցող լիդերների խումբ, որն ի զորու լիներ համաշխարհային տարողության խնդիրների լուծումներ գտնել: Ո՛չ Բիլ Բլինթոնը եւ ո՛չ էլ հատկապես Ջորջ Բուշը չդարձան այն քաղաքական ճարտարապետները, որոնց համար տեսանելի լիներ միջազգային համակարգի նոր գծագիրը:

Թվում էր, թե սեպտեմբերի 11-ից հետո Միացյալ Նահանգները վերջապես ձեռք բերեց հստակ խնդիր՝ ստեղծել այնպիսի միջազգային համակարգ, որն աննշան կդարձնի ահաբեկչական ցանցերի գործունեության էֆեկտիվությունը: Փոխարենը Ջ.Բուշի վարչակազմը պատերազմ հայտարարեց բավական աղոտ ուրվագծերով թշնամու՝ միջազգային ահաբեկչության դեմ եւ անմիջապես այդ պատերազմը վարելու համար իր բանակներն ուղարկեց Աֆղանստան եւ Իրաք, որից հետո պարզվեց, որ ահաբեկչության նկատմամբ վերջնական հաղթանակ տանելու համար պետք է նաեւ դաստիարակել կամ վերացնել Սիրիան եւ Իրանը:

Այս բացահայտ անհեթեթությունները հստակորեն գնահատվեցին ամերիկյան ընտրողի կողմից, որը կտրուկ կերպով դեմ արտահայտվեց

իրենց հասկացած ժողովրդավարությունը տարածելու գաղափարով անկեղծորեն տարված բուշական նեոկոնսերվատորների նկատմամբ՝ նախընտրելով դեմոկրատական կուսակցության թեկնածուներին, որոնք նույնպես առայժմ որեւէ հստակ եւ նոր ժամանակներին համապատասխանող գաղափարներ եւ ծրագրեր չեն առաջարկել:

Այս 15 տարիների ընթացքում ամերիկյան իշխող վերնախավը կարողացավ լրջորեն վատացնել հարաբերությունները «հին Եվրոպայի» հետ, ինչպես նաեւ նպաստել Եվրամիության հին եւ նոր անդամների միջեւ լուրջ խնդիրների առաջացմանը:

Մյուս կողմից, ամերիկյան այս քաղաքականության հետեւանք դարձավ այն, որ ամբողջ աշխարհում արձանագրվեց հակամերիկյան տրամադրությունների աննախադեպ աճ, ինչը գրեթե անընկալելի է դարձնում ամերիկյան քարոզչությունն արդեն միայն այն պատճառով, որ դա ամերիկյան է:

Չարկ է նշել, սակայն, որ Միացյալ Նահանգներ մեկնել ցանկացողների թիվը բոլորովին չի պակասում: Այս պարադոքսի մեջ կարելի է գտնել ստեղծված իրավիճակը բացատրելու բանալին՝ Միացյալ Նահանգներն իր ներքին կառուցվածքով, սոցիալական մեխանիզմներով, դատական համակարգով եւ այլն շարունակում է ընկալվել որպես ամենագրավիչ երկիր, սակայն դեպի աշխարհ ուղղված իր առաքելությունն առաջացնում է հիասթափություն եւ դժգոհություն, ինչը նշանակում է, որ ժամանակի մարտահրավերն ամերիկյան վերնախավի կողմից ճիշտ չի վերծանվել, ինչի հետեւանքով առաքելությունը սխալ է գիտակցվել: Դրվել են ոչ այն խնդիրները, որոնք պետք է դրվեին, օգտագործվել են ոչ այն միջոցներ եւ ծեսերը, որոնք պետք է օգտագործվեին:

Կա մի պարզ բանաձեւ՝ աշխարհն ավելի մեծ է, քան Միացյալ Նահանգները, ուստի աշխարհի հակազդեցությունն ավելի մեծ է, քան Միացյալ Նահանգների ազդեցությունը: Սակայն խնդիրն այն է, որ աշխարհի տարբեր հատվածներ տարբեր կերպ են հակազդում կամ արձագանքում Ամերիկայի ազդեցությանը. որոշ հասարակություններում համարյա պետական գաղափարախոսություն է դառնում ազգայնականությունը, մյուսներում՝ աճում է կրոնական գործոնը, ինչը բնական պաշտպանական ռեակցիա է դրսից եկող օտար արժեհամակարգից սեփական էական արժեքները պաշտպանելու համար:

Այս ամենին եթե գումարենք անխուսափելի պայքարն էներգակիրների պաշարների եւ ենթակառուցվածքային ցանցեր ստեղծելու ու դրանք կառավարելու համար, ապա կստանանք այն իրավիճակը, որը կարելի է բնութագրել որպես բազմաբեւեռ եւ բազմավեկտոր անկայուն համա-

կարգ: Նման իրավիճակում չեն կարող լինել հստակեցված անվտանգության համակարգեր, ինչը նշանակում է, որ նույնիսկ այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին ՆԱՏՕ-ն է, ներկայումս նույնպես չի կարող բնութագրվել որպես հստակ խնդիրներ ունեցող եւ լիարժեք գործող անվտանգության համակարգ:

Հավանաբար, նման իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, այնուամենայնիվ, պատասխանել մի շատ կարելի հարցի՝ որտեղի՞ց է բխում համընդհանուր անվտանգության սպառնալիքը եւ, ընդհանրապես, կա՞րողյոք այդպիսի հասկացություն՝ «համընդհանուր անվտանգություն»:

Փորձը ցույց տվեց, որ միջազգային ահաբեկչությունը չի ընկալվում որպես համընդհանուր սպառնալիք, իսկ, օրինակ՝ Միջին Արեւելքի ժողովուրդները չեն ընկալում իրենց որպես համընդհանուր անվտանգության համակարգի սուբյեկտներ: Պատմությունը նաեւ հաստատում է, որ այն, ինչը ամերիկյան քարոզչությունն ազդարարեց որպես քաղաքակրթությունների բախում, իրականում այդպիսին չի հանդիսանում՝ բախվում են պետությունների, ցանցերի շահերը:

Այս պայմաններում էֆեկտիվ են միայն մեծ տերությունների շուրջ ձեւավորվող անվտանգության համակարգերը: Ժամանակին դա բրիտանական անվտանգության համակարգն էր, որի ազդեցության ոլորտն այնքան լայնարձակ էր, որ թույլ չտվեց, օրինակ՝ Ռուսական կայսրությանը, որն ուներ սեփական անվտանգության համակարգ, իր նպատակներին հասնել Սեւ ծովի ավազանում եւ Հեռավոր Արեւելքում:

Ներկայիս ամենագործուն անվտանգության համակարգը շարունակում է մնալ ամերիկյանը, որի ներքին մղումն այն է, որ ներառի ոչ միայն ՆԱՏՕ-ն, այլեւ մեծ ու փոքր նման այլ կառույցներ, ինչը սկզբունքորեն թեւեւ անհնար է, սակայն կարող է լուրջ խթան հանդիսանալ նոր գաղափարների ձեւավորման համար:

Այս դիտարկումների սկզբում նշվեց, որ արդյունավետ անվտանգության համակարգ ստեղծվել է այն դեպքում, երբ ձեւավորվել է ուժերի համեմատական հավասարություն: Այն մոտ ապագայում տեսանելի չէ:

Միացյալ Նահանգներն այսօր էլ շարունակում է մնալ համաշխարհային թե՛ տնտեսական, թե՛ ռազմական առաջատարը: Որպես այդպիսին՝ ԱՄՆ-ը ձգտում է ձեռք բերել հնարավորինս ավելի շատ լծակներ, որոնք իրեն հնարավորություն կտան ավելի քիչ կորուստներով իրականացնել առաջատարի իր դերը: Սա նշանակում է, որ Միացյալ Նահանգները շարունակելու է փորձերը՝ ամրապնդվել այնպիսի տարածաշրջաններում, որտեղ իր դիրքերը դեռեւս թույլ են: Այն որոշակի

հաջողությամբ շարունակելու է իրականացնել իր նպատակները նախկին խորհրդային հանրապետություններում, որոնք մտահոգություններ եւ վերապահումներ ունեն ռուսական քաղաքականության նկատմամբ:

Այս առումով, հատկանշական է Միացյալ Նահանգների մտադրությունը՝ ռազմական ներկայություն ունենալ Սեւ ծովում, ինչի դեմ է արտահայտվել ոչ միայն Ռուսաստանը, այլ նաեւ ՆԱՏՕ-ի անդամ եւ Միացյալ Նահանգների դաշնակից Թուրքիան:

Ամերիկյան զինված ուժերի հայտնվելը Արեւելյան Եվրոպայի երկրներում, նրա ձգտումը ամրապնդվել Սեւ ծովի ավազանում չեն կարող չմտահոգել Մոսկվային, որը վարելով ակտիվ արտաքին քաղաքականություն եւ օգտվելով ամերիկացիների գործած սխալներից՝ փորձելու է վերականգնել ազդեցությունը Միջին Արեւելքում, կառուցելով իր խողովակաշարերը՝ խուսափել մեկուսացումից: Սակայն այս գործողությունները շարունակում են կրել ռեակտիվ բնույթ, իսկ դրանց արդյունքները նվազեցվում են իր հետ համագործակցող երկրների՝ Ռուսաստանից գազանավթային կախվածության մեջ գտնվելու սպառնալիքից առաջացած այլընտրանքների որոնումներով:

Վերը նշվածը վկայում է, որ Ռուսաստանը տեսանելի ապագայում չի կարող հավակնել «բեւեռի» դերակատարմանը, ինչի նկրտումները վերջին շրջանում ակնհայտորեն դրսևորում է:

Կա ավելի հավանական, բայց համեմատաբար տեսական գործընթաց, որի արդյունքում կստեղծվի ուժերի համեմատական հավասարություն: Չինաստանի եւ Յնդկաստանի բուռն զարգացումն ու Եվրոպայի միավորումը, ի վերջո, կհանգեցնի ուժերի ցանկալի բալանսի ստեղծմանը, որը եւ կապահովի միջազգային համակարգի անհրաժեշտ կայունությունը:

Դժվար է ներկայունս ենթադրել, որ մոտակա մի քանի տարիների ընթացքում համաշխարհային թատերաբեմում երեւան կգան այնպիսի քաղաքական լիդերներ, որոնք կկարողանան առաջարկել արդի գլոբալ աշխարհին համապատասխանող աշխարհակարգի մոդել: Մեր տեսակետից, այս ամենը նշանակում է, որ առաջիկա տարիներին Միացյալ Նահանգներն իրականացնելու է իր համաշխարհային առաջատարի դերը, սակայն՝ զգուշանալով նախկին սխալների կրկնությունից, ավելի ճկուն ձեւով օգտագործելով միջազգային կառույցները եւ ձգտելով իր գործողությունները հիմնավորել միջազգային իրավունքի նորմերով:

ԱՄՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՏՐԱՏԵԳԻԱՆ Սերգեյ Պեչուրով

Միացյալ Նահանգների ռազմաքաղաքական կուրսը սահմանվում է երկրի նախագահի կողմից՝ «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում, որը կանոնավոր կերպով հրատարակվում է երկու տարբերակով՝ բաց եւ փակ: Այսօր այդ կուրսը մշակվում եւ իրականացվում է այն դրույթի հիման վրա, թե Ամերիկյան հանդիսանում է ու տեսանելի հեռանկարում պետք է մնա միակ գերտերությունը, գլոբալ առաջատարը, որն իրավունք ունի միանձնյա ձեւավորել միջազգային իրադրության այնպիսի պայմաններ, որոնք առավելագույնս կնպաստեն տարբեր երկրներում ու տարածաշրջաններում Վաշինգտոնի առանցքային շահերի առաջնդմանը:

Ամերիկյան վարչակազմը, ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանելիս, ելնում է նրանից, թե ներկա պահին Միացյալ Նահանգների ազգային անվտանգության շահերին, առաջին հերթին, սպառնում են միջազգային ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը, զանգվածային ոչնչացման զենքի ու նրա փոխադրամիջոցների տարածումը, տնտեսական «մարտահրավերները» եւ այնպիսի վերազգային խնդիրներ, ինչպիսիք են զենքի անօրինական վաճառքը, բնակչության չվերահսկվող միգրացիան, թմրանյութերի տարածումն ու շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը:

Այս պայմաններում Վաշինգտոնի ռազմաքաղաքական կուրսն ուղղված է աշխարհում Միացյալ Նահանգների առաջատար դիրքի պահպանմանը եւ հենվում է զինված ուժերի մարտական հզորության վրա:

Պաշտոնական փաստաթղթերի եւ, ամենագլխավորը, ամերիկյան ռազմաքաղաքական դեկավարության գործնական քայլերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱՄՆ-ն իր զինված ուժերը հիմնականում պատրաստում է ոչ թե լայնածավալ ռազմական ագրեսիային դիմագրավելուն, այլ՝ առավելապես «վտարյալ երկրների» հետ պատերազմի, ընդ որում՝ նրանց տարածքում:

Հատկանշական է, որ նախորդ ամերիկյան նախագահների օրոք «Ազգային անվտանգության ռազմավարության» էջերում չէր կարելի «կանխարգելիչ պատերազմի» մասին որեւէ դարձվածք գտնել. այն

այսօր հանդիսանում է ԱՄՆ ազգային քաղաքականության հիմքը եւ հայտնի է «Բուշի դոկտրին» ոչ պաշտոնական անվանումով:

Առաջին անգամ այս քաղաքական դոկտրինն անթաքույց առաջ քաշվեց 2002թ. հունիսի 1-ին, Վեսթ Փոյնթի ռազմական ակադեմիայի շրջանավարտների առջեւ ԱՄՆ նախագահի ունեցած ելույթում: Ջորջ Բուշն իր քաղաքականությունը հետեւյալ կերպ ձեւակերպեց. «Ահաբեկչության դեմ պատերազմն անկարելի է շահել պաշտպանությունում: Մենք պետք է մարտի բռնվենք թշնամու հետ, փշրենք նրա ծրագրերը՝ մինչեւ նրանց հայտնվելը»:

Պաշտոնական քաղաքականությունում այս փիլիսոփայության ամրագրումը տեղի ունեցավ «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության» լույս աշխարհ գալուն պես՝ 2002թ. սեպտեմբերին: Այնտեղ, մասնավորապես, հայտարարված է. «Միացյալ Նահանգներն այլեւս չի կարող ապավինել բացառապես պատասխան գործողությունների...»:

«Բուշի դոկտրինով» նախատեսված գործնական միջոցառումների ծրագիրն անհամեմատ ավելի հավակնոտ է, քան սպառնալիքի սովորական կասեցումը: Ընդհանուր առմամբ, նրա առաջնահերթ եւ մոտակա նպատակը դարձավ աշխարհի կարեւոր տարածաշրջանների ռազմաքաղաքական իրադրության արմատական փոփոխումը, առաջին հերթին, Մեծ Մերձավոր Արեւելքում, բնականաբար՝ Միացյալ Նահանգների ձեռնտու հունով: Այս դոկտրինի կողմնակիցները գտնում են, որ քանզի տեղաբնակները հարգում են միայն կամային որոշումներն ու իշխանությունը, իսկ ընդունված կիսամիջոցները թուլության նշան կլինեն, ԱՄՆ-ը պետք է ցուցադրի վճռական գործողությունների դիմելու իր պատրաստականությունը:

Սպասվում էր, թե սահմանական Իրաքի ջախջախումը վերջ կդնի ահաբեկչությանը եւ էապես կթուլացնի Վաշինգտոնի հիմնական տարածաշրջանային դաշնակցին՝ Իսրայելին սպառնացող վտանգը, ճիշտ այնպես, ինչպես Աֆղանստանում իսլամական արմատականների վարչակարգի տապալումը կիսթանի այդ երկրի խաղաղ զարգացմանը: Սակայն, իրականում, Արեւմուտքի երկրների գործողությունները հակառակ ազդեցություն ունեցան. այդ տարածաշրջանը դարձավ էլ ավելի պայթյունավտանգ:

Այնուամենայնիվ, Սպիտակ տան կողմից 2006թ. գարնանը հրապարակված նոր «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ պահպանված են «Բուշի դոկտրինի» սկզբունքային դրույթները. ամերիկյան վարչակազմի մտադրությունը՝ ապահովել Միացյալ Նահանգների

ռազմական գերազանցությունը ցանկացած հավանական հակառակորդի նկատմամբ եւ ինքապաշտպանության իր իրավունքի իրականացման նպատակով (ինչը Վաշինգտոնը մեկնաբանում է՝ ելնելով սեփական չափանիշներից)՝ կանխարգելիչ հարվածներ հասցնելու վճռականությունը:

* * *

«Բուլշի դոկտրինը» հիմնավորապես ուժեղացվեց զինված ուժերի երկու հայեցակարգային փաստաթղթերով՝ «ԱՄՆ ազգային պաշտպանության ռազմավարությունը» եւ «ԱՄՆ ազգային ռազմական ստրատեգիան»:

«ԱՄՆ ազգային պաշտպանության ռազմավարությունը» սկզբնապես Պենտագոնի կողմից ստեղծվեց որպես փակ «Ռազմավարական պլանավորման ցուցումներ»-ի բաղկացուցիչ մաս: Բաց տարբերակով այն լույս ընծայվեց 2005թ. մարտի 1-ին: Այս առանձին ծրագրային փաստաթուղթը, որը պատրաստված է՝ հաշվի առնելով Աֆղանստանում եւ Իրաքում ռազմական փորձը, դարձավ Ջորջ Բուշ-կրտսերի երկրորդ նախագահության շրջանում ԱՄՆ ռազմական քաղաքականության իրագործման ծրագրի հիմքը:

Վերլուծաբաններն, անշուշտ, ուշադրություն դարձրին երկրի անվտանգության սպառնալիքների նոր դասակարգմանը: Այստեղ՝ ավանդական սպառնալիքների կողքին (որոնք պայմանավորված են մյուս պետություններում միջուկային զսպման ներուժի եւ ընդհանուր նշանակության ուժերի առկայությամբ՝ ընդունակ ռազմական հակամարտությունների ընթացքում դիմադրություն ցույց տալ ԱՄՆ-ին), շրջանառվում են «ասիմետրիկ» եւ «աղետաբեր», ինչպես նաեւ ապագայում ԱՄՆ գերակայությունը ռազմական ոլորտում վիճարկելու ունակ մի շարք երկրների սպառնալիքները (այդպիսի երկրների թվին Վաշինգտոնն, առաջին հերթին, դասում է Չինաստանին ու Ռուսաստանին, ինչը, ի դեպ, չի թաքցվում):

Հաշվի առնելով արդի սպառնալիքների համալիր բնույթը՝ Պենտագոնի կողմից ձեւակերպվեցին համապատասխան ռազմավարական խնդիրներ, որոնք ենթադրվում է լուծել նոր մարտահրավերներին սեփական ռազմական ներուժի ադապտացման միջոցով՝ նպատակ ունենալով համոզել հավանական հակառակորդներին Ամերիկայի ազգային շահերին վնասելու ծրագրերի անիրագործելիության մեջ: Իրավիճակի անբարենպաստ զարգացման դեպքում գործի է դրվում

ուժի ցուցադրման մեխանիզմը, եւ եթե այն չի բերում անհրաժեշտ արդյունք, Միացյալ Նահանգների զինուժը պետք է խորտակիչ հարված հասցնի «այնտեղ եւ այն պահին, որտեղ ու երբ դա պահանջվի»:

«ԱՄՆ ազգային պաշտպանության ռազմավարություն»-ում հրահանգվում է՝ երկրի տարածքի հուսալի պաշտպանության ապահովման հետ միաժամանակ ունենալ զսպման չորս գործողության, երկու խոշոր ռազմական կամպանիայի հնարավորություն, որոնցից մեկը պետք է ավարտվի «կայծակնային եւ արդյունավետ» հաղթանակով, ինչպես նաեւ ամբողջ շարք առավել պակաս մասշտաբային հատուկ գործողություններ:

Այլ կերպ ասած՝ այս հրահանգից հետեւում է, որ ահաբեկչության, թմրաբիզնեսի եւ մյուսների դեմ պայքարի համար ջանքերի մոբիլիզացման քողի տակ Վաշինգտոնը, ռազմատեխնիկական հեղափոխության նվաճումների հիման վրա, իրականացնում է ԱՄՆ զինված ուժերի մարտական հզորության ավելացում՝ գլխավորապես կոնվենցիալ (ավանդական) պատերազմների մղման համար: Ընդ որում՝ Միացյալ Նահանգների ժամանակակից միջուկային ռազմավարությունը հաստատում է ռազմական գործողությունների վարման ընթացքում միջուկային զենքի գործադրման հնարավորությունը:

«ԱՄՆ ազգային ռազմական ստրատեգիայում» կոնկրետացվում են «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության» եւ «ԱՄՆ ազգային պաշտպանության ռազմավարության» դրույթները, սահմանվում են պլանավորման ու մարտական գործողությունների անցկացման ղեկավար սկզբունքները՝ արդի մարտահրավերներին համապատասխան: Այդ փաստաթղթի նոր խմբագրությունը հիմնականում կյանքի կոչվեց այն պատճառով, որ 21-րդ դարի սկզբին ամերիկյան ռազմական վերլուծաբանները բացահայտեցին ԱՄՆ զինված ուժերի անհամապատասխանությունը ապագայի պահանջներին:

Ընդհանուր առմամբ, մոտակա տարիներին ամերիկյան զինուժի շինարարությունը եւ գործադրումը կիրականացվեն մի շարք փաստաթղթերի հիման վրա, որոնք նախատեսում են նոր մոդելի օգտագործում՝ կողմնորոշված ոչ թե կոնկրետ հակառակորդին, այլ ապագայի հնարավոր (նույնիսկ ենթադրական) սպառնալիքների ողջ սպեկտրին դիմակայելուն:

Միաժամանակ, նկատվում է ակնհայտ առաջընթաց ռազմական հակամարտություններում կոալիցիոն գործողություններին վերաբերող հարցերի մանրակրկիտ մշակման ուղղությամբ: Այս միտումն առանձնապես նկատելի դարձավ Իրաքում, Աֆղանստանում եւ անգամ

նախկին Հարավսլավիայում հետկոմֆլիկտային կարգավորման գործում ԱՄՆ հայտնի ձախողումներից հետո:

Ներկայումս, օգտագործելով տեղեկատվական, դիվանագիտական եւ այլ հնարավորություններ՝ Միացյալ Նահանգներն ավելի ու ավելի համառոտաբար է փորձում, այսպես ասած, «լղոզել պատասխանատվությունը», սեփական ուժային գործողություններին տալ միջազգային եւ օրինական բնույթ: Այդ իմաստով, ՆԱՏՕ ռազմաքաղաքական կազմակերպությունը հանդիսանում է առավել հարմար գործիք՝ աշխարհի գլոբալ վերակառուցման ամերիկյան ծրագրերն օրինականացնելու համար:

(տպագրվում է կրճատումներով)

«Независимое военное обозрение»

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Օնիկ Զարմունի Ցեղը ե՛վ ժողովուրդը	1
Սարգիս Հարությունյան ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	3
Սալիմ Ջյոհջե ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ» ՀԱՄԱՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ	8
Խաչատուր Դադայան ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՏԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	13
Արաքս Փաշայան ԻՐԱՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ` ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ	17
Գագիկ Տեր-Հարությունյան ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ ԱՄՆ–ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	22
Սուրեն Սարյան ՉԻՆԱՍՏԱՆԸ ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ	27
Դավիթ Հովհաննիսյան ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	35
Սերգեյ Պեչուրով ԱՄՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ	40

*Շապիկի վրա պատկերված է
ճորոխ գետի հովիտը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: